

ՄԱՍՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻՋ. ՏԱՐԻ ԹԻԻ 37 (1287) ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 21, 2006
 VOLUME 26, NO. 37 (1287) SATURDAY, OCTOBER 21, 2006



Պաշտօնաթերթ՝
 Ս. Դ. Հնչակեան Կուսակցության
 Արևմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
 1060 N. Allen Ave. Suite 101
 Pasadena, California 91104

ՄԵՐ ԱՆԿԻԻՆԵՆ

**ԿՐՆԱՅ ԿՐԿՆՈՒԻԼ
 ԿՐՍԵՔ, ՆՈՅՆ ԽԱՂԸ՝
 ԱՊԱ ԻՆՉ**

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Մեր նախանցեալ համարով, հանգամանօրէն անդրադարձած էինք Ֆրանսայի նախագահ՝ Ժազ Ծիրագի գլխաւորած ֆրանսական պատուիրակութեան Հայաստան տուած եռօրեայ պաշտօնական այցելութեան մասին: Հոն դիտել կուտայինք, թէ Ֆրանսայի Խորհրդարանի Հոկտեմբեր 12-ի նիստի օրակարգի վրայ կը գտնուի ցեղասպանութեան ուրացումը՝ Բրեւիլեան յանձնարարութիւնը սահմանելու կոչուած էինք, որ Ֆրանսայի Խորհրդարանը պիտի վաւերացնէր իր երկրին համար պատուարեք, այլ համարադրկային ապահով կեանքի, նոր ցեղասպանութիւններու կանխարգիլման սատար՝ այդ բարոյական քննարկութեանը:

Ֆրանսայի այս նախաձեռնութիւնը ահագին փոքրիկ ստեղծած էր արդէն Թուրքիոյ պետական ու լրատուական բարձրագոյն ոլորտներէն մերս, ուր Ֆրանսայի հասցէին կ'արձակուէին սպանալիքներ եւ փողոցային ռնոյ գոնիկութիւններ:

Շար.ք էջ 16

ՖՐԱՆՍԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՒ ՕՐՅԱՆ ՓԱՍՏՈՒՔԻՆ ՇՆՈՐՀՈՒԱԾ ՆՈՊԵԼԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԸ ՄԵԾ ԱՐՁԱԳԱՆՔ ՅԱՌԱՋԱՑՈՒՑԻՆ ԶԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՐՑԻՆ ՇՈՒՐՉ

Հոկտեմբեր 12-ին Ֆրանսայի Խորհրդարանը հաստատեց Հայոց ցեղասպանութիւնը հերքելու համար պատիժ սահմանող օրէնքը եւ նոյն օրը, գրականութեան Նոպէլեան մրցանակը շնորհուեցաւ թուրք գրող Օրհան Փամուքին, որ թուրքիոյ մէջ դատական հետապնդումի ենթարկուած էր Հայկական ցեղասպանութեան մասին արտայայտուելուն համար: Այս երկու իրադարձութիւնները միջազգային եւ թրքական շրջանակներու եւ մամուլի մօտ մեծ արձագանք յառաջացուցին Հայկական ցեղասպանութեան հարցին շուրջ: Թուրքիոյ մէջ շատեր համահաւասար դժգոհութիւն յայտնեցին երկու որոշումներուն նկատմամբ:

Ֆրանսայի Ազգային Ժողովի որոշումը ընդունուեցաւ 106-ի դէմ 19-ը ձայնով: Օրէնքի համաձայն՝ Հայոց ցեղասպանութիւնը հերքողները կրնան ենթարկուիլ մէկ տարուայ բանտարկութեան եւ 45 հազար եւրօ տուգանքի: Օրէնքը գործադրութեան դրուելէ առաջ պէտք է արժանանայ նաեւ Մերակոյտի հաւանութեան եւ ապա ստորագրուի Հանրապետութեան նախագահին կողմէ: Թուրքիոյ վարչապետ Ռեջեփ Էրդողան «Մեծ ամօթ» եւ «խօսքի

ագատութեան համար սեւ բիծ» որակեց Ֆրանսայի Ազգային Ժողովի որոշումը:

«Պատմական սխալ թոյլ տրուած է», - ըսաւ Թուրքիոյ վարչապետը:

«Թող ոչ ոք համոզուած չըլլայ, թէ Թուրքիա եղածը թեթեւ կ'ընդունի», - իր կարգին ըսաւ արտաքին գործոց նախարար Աբդուլա Կիլլ:

Հոկտեմբեր 17-ին Թուրքիոյ Խորհրդարանը դատապարտեց Հայոց ցեղասպանութեան վերաբերող ֆրանսական օրինագիծը: «Չարմանալի է տեսնել Ֆրանսային վճիռ կայացնողի դերին մէջ, երբ խօսքը Թուրքիոյ հետ առնչուող պատմական միջադէպերու մասին է: Մինչդեռ նոյն երկիրը կը յորդորէ ամէն ինչ պատմաբաններու դատին ձգել, երբ խօսքը իր գործողութիւններու մասին է, որոնք յանգեցուցած են մէկ միլիոնէ աւելի մարդոց սպանութեան Ալճերիոյ, Հնդկաչինի, Մատագակարի եւ որոշ ափրիկեան երկիրներու մէջ», - ըսուած է Թուրքիոյ Խորհրդարանի յայտարարութեան մէջ:

«Հայաստանի կողմէ բանեցուող լուրջ քննարկումները Ֆրանսայի եւ այլ երկրներու մէջ եւ

թուրք ազգի իրաւունքներու ու արժանապատուութեան դէմ ուղղուած անոր թշնամական քաղաքականութիւնը սուղ պիտի նստին այդ երկրներու վրայ», - յայտնած են Թուրքիոյ Խորհրդարանի անդամները:

«Աստիճայով փրենս» գործակալութեան համաձայն, ելույթ ունենալով Խորհրդարանի առջեւ՝ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Աբդուլա Գիլլ վստահեցուցած է, որ կառավարութիւնը կը քննարկէ բոլոր միջոցները՝ կանխելու օրինագիծի վերջնական հաստատումը:

Միւս կողմէ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան հանդէս եկաւ յայտարարութեամբ մը ըսելու համար, որ նման որոշումի ընդունումը «Ֆրանսայի Խորհրդարանի ինքնիշխան իրաւունքն է»:

«Մեզ համար անհասկնալիս Թուրքիոյ կառավարութեան կողմէ հասարակութեան ծայրայեղ հակադեցութեանը հրահրումն է, յատկապէս այն դէպքում, երբ Թուրքիան ինքն օրէնք ունի, որով քրէական պատիժ է սահմանուած նրանց նկատմամբ, ովքեր ընդամենը օգտագոր-

Շար.ք էջ 4

ԶԱՃՆՑԻՆ ԶԵՐՍՕՐԵՆ ՈԳԵԿՈՉԵՑ ԶԱՃՆՈՅ ԶԵՐՈՍԱՍԱՐՏԻ 86-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՉ



Մատաղի պատրաստութիւն

Հոկտեմբեր 15-ի Կիրակին, տունական օրերը չիւղեցնող խուռներամ բազմութիւն մը ամփոփուած էր Փասատինայի Սրբ. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին: Այդ քաղաքի եւ անոր մօտակա ու հեռաւոր քաղաքներէն (Կլէնտէյլ, Հովիտ Ուիտիլըրի եւ այլն) եկած հաճընցիներ, փութացեր էին համանուն եկեղեցին, ներկայ գտնուելու յաւարտ Սրբ. Պատարագի հոգեհանգստեան արարողութեան մը, որ նուիրուած էր

Հաճնոյ հերոսամարտին, յանուն հայրենիքի պաշտպանութեան ինկած հաճընցի անգուգական հերոսներուն, 15 Հոկտեմբեր 1920-թուին:

Արդարեւ, այդ կիրակին, չիւղեալ ճակատամարտի 86-ամեակն էր: Աւանդութիւն դարձած հոգեհանգստեան պաշտօնի կատարումէն եւք Հարաւային Քալիֆորնիոյ Հաճնոյ Հայրենակցական Միութեան հաւա-

Շար.ք էջ 8

ԶԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԻՐ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՅԱՅՏՆԷ ԳՈՆԿՐԵՍԱԿԱՆ ԱՏԱՄ ՇԻՖԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹԵԱՆ

Նկատի առնելով անոր յանձնառու կեցուածքը Ամերիկահայութիւնը յուզող հարցերու շուրջ եւ Ամերիկեան Գոնկրէսէն ներս անոր տարած տքնաշան աշխատանքը, Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) յառաջիկայ Նոյեմբեր 7-ին կայանալիք ընտրութիւններուն առթիւ իր գորակցութիւնը յայտնեց գոնկրէսական Ատամ Շիֆի վերընտրութեան, Քալիֆորնիոյ 29-րդ հայաշատ ընտրաշրջանէն ներս:

Անցնող աւելի քան հինգ տարիներու ընթացքին Ներկայացուցչի ջան անդամ Ատամ Շիֆ մեծ աշխատանք տարած է, որպէսզի ամերիկեան Գոնկրէսը եւ միջազգային հանրութիւնը ճանչնան Հայկական ցեղասպանութիւնը: Անցեալ տարուայ Յունիսին ան յաջողեցաւ ապահովել Հայկական ցեղասպանութեան մասին բանաձեւի մը վաւերացումը Գոնկրէսի Միջազգային Յարաբերութեանց յանձնաժողովէն ներս:

Գոնկրէսական Շիֆ նաեւ հեղինակն է թիւ 3103 օրինագիծին, որ կը քաջալերէ աւելի ազդու քայլեր առնելու, պարտաւորեցնելու համար Թուրքիան՝ վերջ տալու Հայաստանի ապօրէն շրջափակումին: Ան նաեւ համահեղինակն է մէկ այլ



Գոնկրէսական Ատամ Շիֆ

օրինագիծի, թիւ 3361, որ կ'արգիլէ ամերիկեան օժանդակութիւնը երկաթուղիի Պաքու-Թիֆլիս-Կարս ծրագիրին, եթէ անոր մէջ չենթադրուի նաեւ Հայաստանը:

Գոնկրէսական Ատամ Շիֆ մնացուն կերպով պաշտպանած է ամերիկեան արտաքին օժանդակութիւնը Հայաստանի, որուն մէջ կ'ինայ նաեւ «Հազարամեակի Մարտահրաւէրներ» ծրագիրի ծիրէն ներս Հայաս-

Շար.ք էջ 4

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԿՐԿՆԻՐ ՄԵՁ ՎԵՏ

ԼՂՀ նախագահ Արկաղի Ղուկասեանի յայտարարութիւնը, թէ ինքը երրորդ անգամ ԼՂՀ նախագահի թեկնածու առաջադրուելու մտադրութիւն չունի, անգամ եթէ օրէնքներն ու Սահմանադրութիւնը իրեն նման հնարաւորութիւն տան, ըստ հուլիան, անսպասելի էր: Անսպասելի էր՝ տրամաբանութեան տեսանկիւնից. ինչպիսիք ասէք, որ Ղուկասեանի երրորդ ժամկէտով առաջադրուելու հնարաւորութիւնը հարցը այսքան չէր սրուել, եթէ իրենք՝ ԼՂՀ իշխանութիւնները, չցանկանային դա: Հարցը ծայրայեղ սրուեց ԼՂ ԱԺ նիստում հանրապետութեան գլխաւոր դատախազ, Սահմանադրական չանձնաժողովի նախագահ Արմէն Զալինեանի արած յայտարարութիւնից յետոյ, երբ վերջինս ասաց, որ ԼՂՀ Սահմանադրութեան ընդունումից յետոյ Արկաղի Ղուկասեանը կարող է եւս երկու անգամ անընդմէջ նախագահի թեկնածու առաջադրուել, ինչը ներկայ օրէնսդրութեան պայմաններում հնարաւոր չէ: Մինչ այդ իշխանութիւնը մերժել էր ընդդիմութեան առաջարկը՝ ԼՂՀ նախագահական յաջորդ ընտրութիւնները եւ սահմանադրական հանրաքուէն մէկտեղելու վերաբերեալ. այս պարագայում Ղուկասեանը չէր կարող նախագահի թեկնածու առաջադրուել, որովհետեւ մինչ նոր Սահմանադրութեան ուժի մէջ մտնելը կը սպառուէր ոչ միայն նրա նախագահութեան, այլեւ նախագահի թեկնածու առաջադրուելու ժամկէտը: Ասել է թէ՛ տրամաբանութիւնը յուշում էր, որ ամէն ինչ արւում է Ղուկասեանի եւս մէկ նախագահութեան ժամկէտ ապաստուելու համար: Եւ ասա, նման գործողութիւններին հետեւում է «հրաժարման» յայտարարութիւն: Սա, իհարկէ, տրամաբանական չէ, եթէ հարցին մօտենում ենք ԼՂՀ ներքին քաղաքական կեանքի տեսանկիւնից: Բայց եթէ հարցին մօտենանք նաեւ Հայաստանի ներքաղաքական կեանքի տեսանկիւնից, ամէն ինչ շատ աւելի պարզ կը դառնայ: Ներքինական վերջին բաժանումների արդիւնքում ԼՂՀ նախագահ Արկաղի Ղուկասեանը յայտնուել է, այսպէս կոչուած, սերժանտների ճամբարում, եւ Ղուկասեանն ու Սարգսեանը չեն խորշում ցուցադրել իրենց յարաբերութիւնների յատուկ մակարդակը: ԼՂՀ նախագահը, իր հերթին, չի խորշում ընդգծել իր եւ Ռոբերտ Բոչարեանի յարաբերութիւնների որոշակի սառնութիւնը. յամենայնդէպս, ներքինական տուտովկաներում: Եւ ասա, ԼՂՀ նախագահի յայտարարութիւնը հրատարակելու համար ներքաղաքական կեանքի մի շատ կարեւոր հարցի ճշգրտում. արդե՞ք Ռոբերտ Բոչարեանը պատրաստուած է 2008 թուականի նախագահական ընտրութիւններում առաջադրել իր թեկնածութիւնը: Հարցը շատ հրատարակելու համար: Իհարկէ, Բոչարեանը ինքը մի անգամ յայտարարել է, որ 2008-ին չի պատրաստուած առաջադրուել: Բայց ինքը՝ Սերժ Սարգսեանը, հարցին մօտենում է գործնական իմաստով: Գործող Պ. Նախարարը հիմա արդէն ակնյայտօրէն տեսնում է, որ Ռոբերտ Բոչարեանը այնքան էլ ոգեւորուած չէ իրեն շէ յաջորդ նախագահ դարձնելու մտքից: Սա ինքնին հասկանալի է: Բայց Սերժ Սարգսեանը չի կարող ինքն իրեն

հարց չտալ. այդ դէպքում ո՞ւմ է տեսնում Բոչարեանը շէ յաջորդ նախագահի պաշտօնում: Մի՞թէ ուզում է նախագահ դարձնել Գագիկ Ծառուկեանին: Իհարկէ, նման տարբերակը բացառում է, եւ դա հասկանալու համար ընդամենը պէտք է պատկերացնել Գագիկ Ծառուկեանին՝ Հայաստանը, ասենք, ԵԱՀԿ գաղաթնաժողովում ներկայացնելիս: Սերժ Սարգսեանը, թերեւս, լուրջ պատճառներ ունի բացառելու նաեւ Վարդան Օսկանեանի, Դաւիթ Յարութիւնեանի եւ Արթուր Բաղդասարեանի տարբերակները: Եւ տրամաբանութիւնը Պ. Նախարարին պէտք է հանգեցնի նրան, որ Բոչարեանն ինքն է ուզում երրորդ անգամ նախագահի թեկնածու առաջադրուել: Եւ ի դէպ, կարծիքներ կան, որ Բոչարեանը իսթանուլ է «Բարգաւաճ Հայաստան»-ՀՀԿ հակասութիւնները, որպէսզի թէ՛ առաջինը, թէ՛ երկրորդը եւ թէ՛ մնացած բոլորը հասկանան, որ իր հեռացումից յետոյ արիւնահեղութիւնը անխուսափելի է դառնալու, եւ ուրեմն՝ յանուն դրա Բոչարեանին պէտք է ինչպէս երրորդ անգամ էլ նախագահի թեկնածու առաջադրուել: Հարցի իրաւական կողմը էական էլ չէ, որովհետեւ Գագիկ Յարութիւնեան-Գագիկ Ղազինեան գոյգը թեթեւ հրահանգի դէպքում դա մի քանի ժամում կը կազմակերպի: Իսկ այս առնչութեամբ Բոչարեանի մտադրութիւնները պարզելը Սերժ Սարգսեանի համար ռազմավարական նշանակութիւն ունի՝ հետագայ անելիքները ճշգրտելու իմաստով: Եթէ անգամ Բոչարեանը չի առաջադրուելու, Պ. Նախարարի համար կարեւոր է, որ Բոչարեանը այդ մասին վերջնականօրէն յայտարարի այսօր:

Այս պարագայում Սարգսեանի համար շատ աւելի հեշտ կը լինի իշխանութիւնը իր շուրջը համախմբել: Որովհետեւ ինչքան հարցի լուծումը յետաձգուել, իշխանական ուժերը կարող են աւելի ու աւելի լուրջ վերաբերուել գահաժառանգի միւս տարբերակներին: Եւ ասա, Ղարաբաղում տեղի ունեցածը կարեւոր է դառնում նաեւ այս համատեքստում: Արկաղի Ղուկասեանը ոչ միայն յայտարարում է, որ ինքը երրորդ անգամ չի առաջադրուելու, այլեւ, ըստ հուլիան, քիչու է դնում բոլոր նրանց հասցէին, ովքեր նման մտադրութիւն կունենան: «Եթէ նոյնիսկ ապագայ Սահմանադրութիւնը ինձ նման իրաւունք ընձեռի, ապա դա ամենաւերջին էլ չի նշանակում, որ ես կ'օգտուեմ այդ հնարաւորութիւնից: Ինձ համար բարոյական նորմերը նոյնքան կարեւոր են, որքան իրաւական նորմերը: Ե՛ւ որպէս մարդ, ե՛ւ որպէս նախագահ, ես արել եմ ինձնից կախուած ամէն բան, որ մեր հասարակութեան ժողովրդավարացման գործընթացը դառնայ անշրջելի», «Ոչ ոք իրաւունք չունի կասկածի տակ դնել մեր երկրում ընթացող ժողովրդավարացման գործընթացի անշրջելիութիւնը», «Համոզուած եմ, Լեւոնային Ղարաբաղը հերթական անգամ աշխարհին ցոյց է տալու ժողովրդավարութեան բարձր մակարդակ եւ օգտագործելու է իշխանութեան քաղաքակիրթ հերթագայման՝ իրեն տրուած հնարաւորութիւնը, ինչը միշտ չէ, որ յաջողուած է իրականացնել յետխորհրդային տարածքի նոյնիսկ ճանաչուած շատ պետութիւններ»:

ԲՈՒՐՆ ԷԼ ԳԻՏԵՆ...

Բոլորն էլ շատ լաւ գիտեն, որ եթէ պատգամաւոր Յակոբ Յակոբեանն իր շքախմբով բախուէր ոչ թէ Ռոբերտ Բոչարեանի թիկնազօրի ղեկավարի հովանաւորութիւնը վայելող «Ֆուլկոնտակտայինները», այլ, օրինակ, մի խումբ «սեմուշ-կա» վաճառողների հետ, ու անգամ նրանցից մի քանիսին էլ այն աշխարհն ուղարկէր, նրան պատգամաւորական անձեռնմխելութիւնից չէին զրկի:

Բոլորն էլ շատ լաւ գիտեն, որ այն մեղադրանքները, որոնք այսօր գլխաւոր դատախազութեան կողմից առաջադրուել են ընդդէմ պատգամաւոր, ՀՀԿ անդամ Յակոբ Յակոբեանի, նոյն յաջողութեամբ եւ նոյն արդարացուածութեամբ կարելի է «կայցնել» նաեւ տասնեակ ուրիշ, այդ թւում՝ ինչպէս հանրապետական, այնպէս էլ այլ «մակնիշի» պատգամաւորների, բայց այդ բանը չի արւում, որովհետեւ բոլորն էլ գիտեն, որ տուեալ դէպքում էականը ոչ թէ օրէնքի, այլ կոնկրետ կլանի դէմ մեղանշած լինելու հանգամանքն է:

Բոլորն էլ շատ լաւ գիտեն, որ չնայած Ռոբերտ Բոչարեանի պնդմանը, թէ «Յակոբ Յակոբեանին անձեռնմխելութիւնից զրկելու մասին Ազգային ժողովի կաշարած որոշումը ցոյց տուեց, որ խորհրդարանի մեծամասնութիւնն ունի բաւարար կամք այս հարցերին օրինական ընթացք տալու եւ արդարադատութիւն իրականացնելու համար», կատարուածը ար-

դարադատութեան հետ միայն շատ հեռաւոր առնչութիւն ունի: Այսինքն, բոլորն էլ հրաշալի հասկանում են, որ ինչպէս Յ. Յակոբեանը, այնպէս էլ տասնեակ, իսկ գուցէ եւ հարիւրաւոր այլ ձեռներէցներ, այդ թւում՝ Յակոբեանին պատժող ճամբարից, ՀՀ օրէնսդրութեան հետ նոյնքան լուրջ խնդիրներ ունեն, ու, չնայած դրան, Բոչարեանի ակնարկած արդարադատութիւնը, գոնէ տեսնելի ապագայում, նրանց չի սպառնում:

Բոլորն էլ շատ լաւ գիտեն, որ Ազգային ժողովը ոչ միայն «արդարադատութեան իրականացման բաւարար կամք» չունի, այլեւ առհասարակ կամք չունի, ինչը բազմիցս ապացուցուել է: Աւելին, եթէ խորհրդարանական մեծամասնութիւնը նոյնիսկ ինչ-որ կամք էլ ունի, ապա տուեալ դէպքում դա աւելի շատ վերաբերում էր Յակոբ Յակոբեանին «չյանձնելուն»՝ գոնէ վերջնականապէս չպատուազրկուելու համար: Սակայն բոլորն էլ գիտեն, որ Ազգային ժողովը բաւարար կամք չունի՝ իր իրական կամքը ցուցադրելու համար:

Մի խօսքով, բոլորն էլ շատ լաւ գիտեն, թէ այսօր Հայաստանում ինչ է կատարուում, ու, չնայած դրան, միմեանց ու հասարակութեան աչքին շարունակաբար թող են փչում: Իսկ թէ ինչու է այդպէս՝ բոլորն այդ մասին էլ գիտեն:

ՏԻԳՐԱՆ ԱԻՆՏԻՍԵԱՆ «ԱՌԱԻՕՏ»

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ՝
ՊԼՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՒԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Ծրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԹԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ՍԱԳԱ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ
Յեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party of
Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.

Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

ԱՐՏԱՃԵՍ ԳԵՂԱՄԵԱՆ. «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԸ ՍՊԱՍԱՐԿՈՂՆԵՐԸ ԲՈՉԱՐԵԱՆԻՆ ԴՐԵԼ ԵՆ ՓՈՒՉԻԿԻ ՏԵՂ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «ՀՀ տնտեսութեան 40 տոկոսը ստուգելու է, եւ իշխանութիւններն այնքան են լկտիացել, որ յանդգնում են ասել, որ տնտեսութիւնը դինամիկ զարգանում է»,- Հոկտեմբեր 16-ին հակակրիմինալ շարժման նախաձեռնութեամբ կազմակերպուած դրամ-դոլար չարաբերութեանը նուիրուած քննարկումների ընթացքում յայտարարեց հիմնական գեկուցող «Ազգային Միաբանութիւն» կուսակցութեան նախագահ Արտաշէս Գեղամեանը եւ հիմնադրեց իր ասածները:



«Ազգային Միաբանութիւն» կուսակցութեան նախագահ Արտաշէս Գեղամեան

Ու՞մ է ձեռնտու այս իրավիճակը՝ հարցրեց պարոն Գեղամեանը եւ ինքն էլ պատասխանեց. «Այն մարդկանց, ովքեր զբաղուած են ապրանքներ ներմուծելով: Մենք քաջատեղեակ ենք, որ ներմուծման ոլորտն ամբողջովին մոնոպոլիզացուած է՝ լինի դա ցորենի, թէ բենզինի, թէ ծխախոտի ներկրումը, եւ այդ ոլորտում անելիք ունեն միայն եւ միայն պարոններ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի իւրայինները կամ էլ իրենց հպարտ համարող, սակայն վերջիններին թրի տակով անցած զանազան մարդիկ, որոնք իրենց վախը քողարկելու համար, փորձում են անհասկանալի կապեր փնտռել իմ եւ մասնաւորապէս Սերժ Սարգսեանի միջեւ՝ իրենցից ուշադրութիւնը չեղելու համար»:

Անուններ չնշելով պարոն Գեղամեանը շարունակեց. «Դոլար-

«ՈՍԿԷ ԳՐԻՉՆԵՐ» «ԱԶԴԱՐԱՐԻ» ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԻՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Արդէն երրորդ տարին է, ինչ Հայաստանի ժողովուրդի միութիւնն անցկացնում է «Ազգարար» մրցանակաբաշխութիւնը: Այս տարի «Ազգարար» մրցանակի արժանացան «Մի-էս փաբլիշինգ հաուզ» հրատարակչութեան տնօրէն Վարդան Ալոյցեանը, «Սիւնեաց երկիր» թերթի գլխաւոր խմբագիր Սամուէլ Ալեքսանեանը, «Լոուի» հեռուստաընկերութեան գլխաւոր խմբագիր Նարինէ Աւետիսեանը, «ՎԵՄ» ռադիոկայանը, Փարաջանովի տուն թանգարանի տնօրէն Զաւէն Սարգսեանը:



«Ազգարար» մրցանակաբաշխութեան արարողութիւնը

սահմանուած մրցանակը նուիրեց Գիւմրիի «Նոյեմի» հեռուստատուդիային՝ «Անկախութեան հասակակիցը» տեսանիւթի համար:

Այս տարի կար եւս մէկ անակնկալ: Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամեանը «Ազգարար» անունանական կրթաթոշակ է սահմանել ԵՊՀ ժողովուրդասիրական ֆակուլտետի երկու գերագանցիկ ուսանողների համար:

Նաեւ չաւելինք, որ միջոցաւման ընթացքում առաջարկութիւն հնչեց, որ եկող տարի մրցանակ սահմանուի նաեւ սփիւռքահայ մամուլի ներկայացուցիչների համար:

«Եթէ ասում ենք մէկ ազգ, մէկ մշակույթ, ապա նաեւ մէկ ազգ, մէկ մամուլ», - նկատեց «Ազգ» օրաթերթի գլխաւոր խմբագիր, «Ազգարար» մրցանակաբաշխութեան ժիւրիի նախագահ Յակոբ Աւետիսեանը:

ԱՆՆԱ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ. «ՊԱՏՊԱՄԱԻՐՆԵՐԻ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՇԱՄԱՐ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻՋԱԴԵՊ ԵՆ ԴԱՐՉԵԼ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Նախորդ շաբաթավերջին խորհրդարանի միջանցքում պատգամաւոր Նահապետ Գէորգեանը փորձեց «Առաւօտ»-ի մի հրատարակման առիթով հաշիւ պահանջել լրագրող Աննա Իսրայէլեանից՝ հայհոյանքներ եւ սպառնալիքներ տեղալով նրա հասցէին:

«Սա, ցաւօք, արդէն դառնում է սովորական աշխատանքային միջադէպ այս խորհրդարանի դէպքում», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց Աննա Իսրայէլեանը: «Ուղղակի, ի տարբերութիւն այլ միջադէպերի, այս անգամ պատգամաւորը գոնէ ներողութիւն խնդրեց»:

Լրագրողների հասցէին փողոցային հայհոյանքից չեստոյ՝ «Ռեսպեկտիւս Արմենիա» թերթի թղթակից Գոհար Սարգսեանը դիմեց Ազգային ժողովի նախագահ Տիրգրան Թորոսեանին, որը հենց նոյն օրը նիստերի դահլիճում կարգի հրաւիրելու կոչ արեց:

«Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ գործնական միջոցների կը դիմի՞՞ այդ կապակցութեամբ, Տիրգրան Թորոսեանը պատասխանեց. - «Հասարակութիւնից եւ Ազգային ժողովում ներկայ անձանցից այդ մարդկանց փոխարէն ներողութիւն եմ խնդրել: Բայց, ցաւօք սրտի, նման միջոցառումի ձեւաւորմանը նպաստում են նաեւ որոշ լրատուամիջոցներ»:

«Կարող էք կարգալ աչսորուայ [շաբաթ օրուայ] մամուլը, եւ կը տեսնէք, թէ ինչ որակումներ են նոյն լրագրողները տալիս երեւոյթներին, ինչ բառապաշար են օգտագործում, եւ սա առաջին դէպքը չէ», - պարզաբանեց Ազգային ժողովի նախագահը: «Ամէն մէկը, ցաւօք սրտի, այս անընդունելի երեւոյթի մէջ ունի մեղքի իր բաժինը: Եւ ճիշդ կը լինի, որ բոլորը ամէն ջանք գործադրեն, որպէսզի այն վերանայ մեր հասարակական կեանքից»:

Հարցադրմանը, թէ, այնուամենայնիւ, «պատգամաւորի շուրթերից պարզապէս հայհոյանք է հնչել, իսկ մամուլում հայհոյանք չկայ», Թորոսեանը պատասխանեց. - «Կարծում եմ, նաեւ հայհոյանք կայ, ուղղակի մի քիչ աւելի զուլաւոր են, աւելի քիչ հնչեղ բառեր են օգտագործում»:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԲԱԻԱՐԱՐԵՑ ԳԼԽԱԻՈՐ ԴԱՏԱԽԱՋԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ ՅԱԿՈՐ ՅԱԿՈՒԲԵԱՆԻՆ ՈՐՊԵՍ ՄԵՂԱԴՐԵԱԼ ՆԵՐԳՐԱԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Ուրբաթ, Հոկտեմբեր 13-ին Հայաստանի Ազգային ժողովի արտահերթ նիստում ձայների 56 կողմ եւ 22 դէմ յարաբերակցութեամբ համաձայնութիւն տուեց երկրի գլխաւոր դատախազ Աղուան Յովսէփեանի միջնորդագրին՝ պատգամաւոր Յակոբ Յակոբեանին որպէս մեղադրեալ ներգրաւել մի շարք քրէական գործերում:

Հայաստանի գլխաւոր դատախազը միջնորդել էր Յակոբեանին որպէս մեղադրեալ ներգրաւելու քրէական օրէնսդրի 8 յօդուածների յատկանիշներով՝ հարկերից խուսափելուց մինչեւ գէնքի գործադրմամբ խուլիզանութիւն:

Քուէարկութիւնից առաջ իր ելոյթում Յակոբ Յակոբեանը ասաց, որ «չի վախենում ոչ մի քննութիւնից»: Դիմելով գլխաւոր դատախազ

Աղուան Յովսէփեանին՝ Յակոբեանը ասաց. - «Եթէ օրէնքը խախտուեց՝ ես իմ իրաւունքները կը պաշտպանեմ ուրիշ ձեւով: Մեղքը՝ ձեր վիզը»:

Նա հարկ համարեց յիշեցնել, որ «այս ամէնը կապ չունի ոչ երկրի նախագահի, ոչ էլ պետական պահանջութեան ծառայութեան պետ Գրիգորի Սարկիսեանի հետ»:

Յակոբեանը իր ելոյթում նաեւ հարց բարձրացրեց՝ եթէ յանցագործութիւնները կատարուել են դեռեւս 1991 թուականից, ինչո՞ւ այդ ժամանակ, երբ ինքը շարքային քաղաքացի էր, իր նկատմամբ գործ չէին յարուցում:

Այս առիթով գլխաւոր դատախազ Աղուան Յովսէփեանը նշեց, որ «նիւթերը հաւաքուել են եւ 2001 թուականից են յարուցուել գործերը»:

ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿԵԱՆԸ ԴԺԳՈՒՄ Է «ԸՆՏՐԱԿԱՆ ՇԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԻՑ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Ազգային ժողովրդավարական միութեան (ԱԺՄ) առաջնորդ Վազգէն Մանուկեանն դժգոհութիւն է յայտնել «Ընտրական Համակարգերի Կենտրոն» կազմակերպութիւնից, որը ԱԺՄ առաջնորդի անունը հանել է իր էլեկտրոնային կայքում անցկացուող նախագահի թեկնածուների վարկանիշային քուէարկութիւնից:

«Այս ամիսների ընթացքում ընտրողների քուէարկութեան արդիւնքում՝ կայուն ձեւով ձայների քանակով միշտ առաջին հորիզոնականում եմ եղել եւ երկու անգամ աւելի քուէ եմ ունեցել երկրորդ տեղը զբաղեցրած փոփոխուող թեկնածուներից», - ասուած է Վազգէն

Մանուկեանի յայտարարութեան մէջ: Անցած շաբաթ ընդդիմադիր գործչի անունը հանուել էր վարկանիշային քուէարկութիւնից՝ համախոհների կողմից «ոչ կոռեկտ քուէարկութիւն իրականացնելու» պատճառաբանութեամբ:

«Կազմակերպութեան նմանօրինակ յայտարարութիւնն ու կողմնակալ դատաւորի կեցուածք ընդունելը հակասում է ինտերնետային կայքի գործունէութեան ընդունուած միջազգային սկզբունքներին, եւ նշանակում՝ կասկածի տակ դնել ու ոտնահարել հազարաւոր ընտրողների իրաւունքները, նաեւ վիրաւորել այն քաղաքացիներին, ովքեր քուէարկել են իմ օգտին», - գտնում է Վազգէն Մանուկեանը:

ԼՈՒՐԵՐ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՐԹ ՄԻՆՉԻՒ
ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՄՊԱՆԱՏՈՒՆ



Հայ ուսանողներ երախտագիտութեան ցոյց կը կատարեն Երեւանի մէջ, Ֆրանսայի դեսպանատան առջեւ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»։ Հարիւրից աւելի երիտասարդներ Օպերայի հրապարակից երթով ուղեւորուեցին դէպի Ֆրանսիայի դեսպանատուն՝ իրենց երախտագիտութիւնը յայտնելու Ֆրանսիայի խորհրդարանին, Հայոց ցեղասպանութիւնը հերքելու համար քրէական պատիժ սահմանելու օրինագիծն ընդունելու վերաբերեալ: «Երախտագիտութեան երթին» մասնակցում էին Հայաստանի պետական Համալսարանի ուսանողներն ու Հնչակեան կուսակցութեան երիտասարդական թեւի անդամները:

Ֆրանսիայի քայլից ոգեւորուած երիտասարդները կոչ էին անում միւս երկրներին նոյնպէս դիմել Ֆրանսիայի օրինակին եւ յոյս էին յայտնում, որ վաղ թէ ուշ

ՍԱՐԱՅԵԼ Է ԵՐԳՉՈՒՄ ԿԱՐԴՈՒՄ ԿԱՐԴԱՆԵԱՆԸ



Երգչուհի Վարդուհի Վարդանեան

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»։ Հոկտեմբեր 15-ին ակտիվիստ արդիւնքում մահացել երգչուհի Վարդուհի Վարդանեանը: Մեր տեղեկութիւններով դժբախտ պատահարը տեղի է ունեցել Սեւան-Երեւան ակտիւմայրուղու վրայ, երբ երգչուհին խումբը վերադառնում էր Մարտունի քաղաքում տեղի ունեցած համերգից:

BMW մակնիշի ակտիւմեքենան, որ վարել է Վարդուհի Վարդանեանը դուրս է եկել ճանապարհի երթեւեկի մասին եւ շրջուել: Վարդուհի Վարդանեանը մահացել է, իսկ միւս երկու ուղեւորները բազմաթիւ վնասուածքներով տեղափոխուել են Երեւան:

այդպիսի օրինագիծ կ'ընդունուի նաեւ Թուրքիայում: Ի դէպ, յատկանշական էր, որ երիտասարդների երթին տարբեր փողոցներից միանում էին սովորական անցորդներ:

Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատանը հասնելուն պէս երիտասարդներն ընթերցեցին շնորհակալական նամակը, որն ընդունելու եւ երիտասարդների հետ անձամբ հանդիպելու համար դեսպանատան շէնքից դուրս եկաւ դեսպան Անրի Կիւնին: «Այսօր չէ, որ ճշմարտութիւնն ընդունուել է: Ֆրանսիան Հայոց ցեղասպանութեան իրողութիւնը բաւական երկար ժամանակ է ինչ ճանաչել է: Ես կարծում եմ, որ այսօր արդեն ժամանակն է, դուք պէտք է մտածէք հարեւան Թուրքիայի հետ ձեր յարաբերութիւնների մասին: Կարծում եմ, որ լաւ հարեւանի հետ լաւ յարաբերութիւնները շատ կարեւոր են ցանկացած երկրի համար», - նշեց Հայաստանում Ֆրանսիայի դեսպանը՝ ջանկանալով գնահատական տալ Թուրքիայի մեկնաբանութիւններին կապուած Ֆրանսիայի ընդունած օրինագծի հետ:

ՐԱՅԱՍՏԱՆԻ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ ԶԻ ԸՆԴՀԱՏՈՒՄ ԱՆԿԱՆ ՈՒՄՎՈՐԱԳԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԵՏԱԳԱՅ ԶԱՐԳԱՑՈՒՄՅՑ

Ռուսաստանեան «Գազպրոմ»-ի ներկայացուցչի հաւաստմամբ, Հայաստանի գազամատակարարումը շարունակուելու է՝ անկախ նրանից, թէ ինչ սցենարով կը զարգանան ռուս-վրացական յարաբերութիւնները:

«Գազպրոմ»-ի արտասահմանեան լրատուամիջոցների հետ կապի բաժնի վարիչ Դենիս Իգնատեւը ասաց, որ գազը Հայաստան «մատակարարուելու է անկախ նրանից, թէ ինչ սցենարով կը զարգանան ռուս-վրացական յարաբերութիւնները»:

Ռուս-վրացական յարաբերութիւններում լարուածութիւնն առաջացել է վրաստանում լրտեսութեան մեղադրանքով ռուս զինծառայողների ձերբակալութիւնից յետոյ: Չնայած վրաստանը ազատ է արձակել ռուս զինծառայողներին, այդուհանդերձ, յարաբերութիւնները մնում են լարուած, եւ Ռուսաստանը շարունակում է վրաստանի տնտեսական շրջափակումը:

ԶԱՒԱԽՔԱՅԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԴԺԳՈՐ Է ՅԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԻՑ

ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»։ Հոկտեմբերի 15-ն վրաստան-Հայաստան (ժողովական-Բաւրա) անցակէտում տեղի ունեցաւ խաղաղ բողոքի ակցիա ի պաշտպանութիւն Երեւանում ձերբակալուած «Միասնական Ջաւախք» ժողովրդավարական դաշինքի նախագահութեան անդամ, Ջաւախքի երիտասարդական մարզամշակութային միութեան (ՋԵՄՄ) նախագահ Վահագն Չախալեանի, տեղեկանում ենք ՋԵՄՄ-ից ստացած նամակից:

«Միասնական Ջաւախք» ժողովրդավարական դաշինքի նախագահութեան անդամ Վահագն Չախալեանը, ով հոկտեմբերի 10-ին դարանակալ յարձակման էր ենթարկուել Երեւանի մատուցներում եւ ստացել ծանր մարմնական վնասուածքներ, յաջորդ օրը կալանուել է ՀՀ ազգային անվտանգութեան ծառայութեան աշխատակիցների կողմից: Ներկայանալով որպէս ոստիկանութեան աշխատակիցներ, նրանք Վահագն Չախալեանին խաբէութեամբ, որպէս տուժող կողմ ցուցմունքներ տալու, հրաւիրել են իբր ոստիկանութեան բաժանմունք, սակայն տարել են ԱԱԾ նախաքննական մեկուսարան եւ կալանավորել: Նրան ներկայացուել է անհետեւ մեղադրանք՝ ՀՀ պետական սահմանն ապօրինի հատելու վերաբերեալ: Հոկտեմբերի 13-ին նոյն անհետեւ մեղադրանքով Երեւանի Կենտրոն-Նորք-Մարաշ համայնքների առաջին ատենախորհուրդում արտօնել է Վահագն Չախալեանին ենթարկել երկամսեայ նախնական կալանքի:

Ակցիայի մասնակիցները, որոնց թիւը 400 հոգուց աւելի էր, վրդովուած էին յատկապէս այն հանգամանքով, որ աւազակային յարձակման ենթարկուած եւ ծանր մարմ-

նական վնասուածքներ ստացած Վահագն Չախալեանի, վերջինիս ընտանիքի անդամների, ինչպէս նաեւ դաշինքի անդամ Գուրգէն Շիրինեանի դէմ կատարուած բռնարարքը հետաքննելու եւ վտանգաւոր յանցագործներին յայտնաբերելու փոխարէն, մտացածին մեղադրանքներով, հետապնդուած է տուժողը: Բողոքի ակցիայի մասնակիցները պահանջեցին հանդիպել Հայաստանի հանրապետութեան կառավարական կառուցներից որեւէ մեկի ներկայացուցչի հետ, ով իրաւասու էր պատասխանել իրենց յուզող հարցին եւ պատասխան պահանջել տեղի ունեցած սադրիչ միջադէպի համար, սակայն նրանց յոյսերը զուրանցան: Հայաստանի կառավարութիւնը անտեսեց Ջաւախահայերի մի հոծ բազմութեան արդարացի պահանջը եւ ոչ մի պետական աշխատող չներկայացաւ մաքսատուն հանդիպելու բողոքի ակցիայի մասնակիցներին հետ, որից յետոյ ակցիայի մասնակիցները մի քանիսը հատուկով ՀՀ պետական սահմանը պահանջեցին ձերբակալել նաեւ իրենց, քանի որ առանց համապատասխան գրանցման հատելով Հայաստանի պետական սահմանը, իրենք եւս ենթակալ են ձերբակալման եւ Հայաստանի համապատասխան ծառայութիւնները պարտաւոր են ձերբակալել վերջիններիս որպէս պետական յանցագործ, ինչը տեղի չունեցաւ:

Երկար եւ անարդիւնք սպասումից յետոյ, Հայաստանի կառավարութեան կողմից անտեսուած խաղաղ ակցիայի մասնակիցները, թողեցին մաքսատան տարածքը եւ վերադարձան, որոշելով շարունակել իրենց բողոքի ակցիաները, մինչեւ հարցի արդարացի լուծում:

ՖՐԱՆՍԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Մարտնակուած էջ 1-էն

ծում են ցեղասպանութիւն բառը կամ համարձակուած են քննարկել այդ իրադարձութիւնները»:

Հայաստանի արտաքին գործոց նախարարը շեշտեց, որ Ֆրանսայի Ազգային ժողովի որոշումը «բնական շարունակութիւնն էր Ֆրանսայի սկզբունքային եւ վճռական պաշտպանութեան մարդասիրական եւ պատմական իրաւունքներին ու արժէքներին»:

Միջազգային կազմակերպութիւններն ու թերթերը ընդհանրապէս քննադատական վերաբերմունք յայտնեցին Ֆրանսայի խորհրդարանի որոշումին նկատմամբ: (Արձագանքներ տեսնել էջ 5-ի վրայ):

Ինչ կը վերաբերի Օրհան Փամուքին շնորհուած Նոպէլեան մրցանակին, Թուրքիոյ փաստաբանները միութեան նախագահ Քեմալ Քելինչսիգ, յայտարարեց, թէ ինքը

կ'ամչնայ իր ազգային պատկանելութեան համար, որովհետեւ «Փամուք արժանացած է Նոպէլեան մրցանակի»: Ան Փամուքի յաղթանակը նկատեց Հայոց ցեղասպանութեան ճանաչման ջատագովներու յաղթանակ:

Թուրք փաստաբանի կարծիքով Նոպէլեան մրցանակաբաշխութիւնը «կորսնցուցած է իր որակն ու փայլքը» եւ դարձած է «քաղաքական գործիք»:

Թուրքիոյ աշակոյցմեան Մեծ Միութիւն կուսակցութեան նախագահ Մուհսին Շաքիջօղլու ըսած է, որ երոպացիները առաջին մրցանակը շնորհեցին Փամուքին, իսկ ցուցակին վրայ յաջորդը՝ էլիֆ Շաֆաքն է»:

Թրքական այլ շրջանակներ սակայն, համակարծիք չէին այս տեսակետներուն հետ եւ Փամուքի յաջողութիւնը կը նկատէին ազգային պարծանք թուրք ժողովուրդին համար:

ՅԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԸ ԿԸ ԶՕՐԱԿՑԻ ԱՏԱՄ ՇԻՖԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹԵԱՆ

Մարտնակուած էջ 1-էն

տանին յատկացուելիք 235 միլիոն տոլարի օգնութիւնը:

«Երախտապարտ եմ Հայ Ամերիկեան խորհրդի գորակցութեան համար: Ինծի համար ուրախութիւն է ներկայացնել աշխարհի ամենէն մեծ հայկական համայնքներէն մէկը: Իմ ընտրաշրջանէն ներս հայկական համայնքը շատ աշխույժ եւ

գործունեայ է եւ իր մեծ նպաստը կը բերէ շրջանի զարգացման: Ես պիտի շարունակեմ ընել իմ կարելին, զարգացնելու համար յարաբերութիւնները Միացեալ Նահանգներու եւ անոր հիմնական դաշնակիցներէն մին նկատուող Հայաստանի միջեւ»,- Հայ Ամերիկեան խորհուրդի ուղղուած շնորհակալութեան նամակին մէջ ըսած է գոնկրէսական Ատամ Շիֆ:

ԱԶԳԱՅԻՆ

ԿԱՐԾԻՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԻՆ ՇՈՒՐՁ

«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ԱՌԱՆՑ ՍԱՇՄԱՆԻ»
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՄՏԱՇՈՎ

«Լրագրողներ Առանց Սահմանի» կազմակերպությունը՝ կասկածի տակ չդնելով Հայոց ցեղասպանության իրողությունները, այնուամենայնիվ ցաւ է յայտնում Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից Հոկտեմբեր 12-ին ընդունուած օրէնքի կապակցութեամբ:

«Օրէնքի ընդունումը չի համապատասխանում Ֆրանսիայի հիմնարար արժէքներին, մասնաւորապէս խօսքի ազատութեանը: Մեզ թւում է, որ պատմութիւնը օրէնքների միջոցով գրելու մօտեցումը աւելի շատ խրախուսում է հակակրօնութիւնը քան երկխօսութեան քարոզումը», - ասուած է կազմակերպութեան տարածած յայտարարութեան մէջ:

Կազմակերպութիւնը խորհրդանշական է համարում այն, որ օրինագծի ընդունմանը զուգահեռ թուրք գրող Օրհան Փամուքը, որը թուրքական իշխանութիւնների կողմից դատարանի առջեւ էր կանգնել Հայոց ցեղասպանութեան հարցը բարձրացնելու համար, արժանացաւ գրականութեան ոլորտում նոպէլեան մրցանակի:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՈՒԼԻ ԱՐՁԱԳԱՆԸ

«Նիւ Եորք Թայմզ»-ը գրում է, որ Շիրակի կառավարութիւնը, որը դէմ է օրինագծին, թուրքիայի հետ երկխօսութեան ցանկութիւն է յայտնել՝ նշելով, որ օրինագիծն «անտեղի է ու ոչ անհրաժեշտ»: «Մենք շատ ցանկանում ենք երկխօսութիւն վարել թուրքիայի հետ, ինչպէս նաեւ ուժեղացնել այդ երկրի հետ մեզ կապող բարեկամական յարաբերութիւններն ու համագործակցութիւնը», - Ֆրանսիայի արտգործնախարարութեան խօսնակի յայտարարութիւնն է փոխանցում թերթը:

«Ուաշինկթոն Փոստ»-ը գրում է, որ «Թուրքիայի ու Եւրոպայի բարդ յարաբերութիւնները երկու մայրաքաղաքներում ներկայացան»: «Թուրքիայի լաւագոյն գրողը Ստոկհոլմում պարզեւատրուեց գրականութեան բնագաւառում Նոպէլեան մրցանակով, իսկ Ֆրանսիացի պատգամաւորներն օրինագիծ ընդունեցին, որով յանցագործութիւն է դառնում Օսմանեան կայսրութիւնում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի դէմ իրականացուած ցեղասպանութեան ժխտումը», - գրում է «Ուաշինկթոն Փոստ»-ը:

«Գազետա» թերթը «Ցեղասպանութիւնների փոխանակում» խորագրով նիւթում գրում է, որ մի խումբ թուրք խորհրդարանականներ պատասխան օրինագիծ ընդունելու առաջարկ են արել՝ այսպէս կոչուած «ալժիրեան ցեղասպանութեան» մասին, ըստ որի, 1954-1962 թուականներին ֆրանսիական գործադրութեան կողմից Ալժիրի խաղաղ բնակչութեան ոչնչացումն իբրեւ ցեղասպանութիւն չորակելը պէտք է պատժուի 50 հազար եւրօ տուգանքով ու 5 տարուայ ազատազրկմամբ:

«Կոմերսանտ»-ը գրում է, որ «Ֆրանսիան հայերին հաւասարեցրեց հրեաների հետ»: «Եթէ Հայոց ցեղասպանութիւնը մերժելու համար պատիժ սահմանելու օրինագիծը վերջնականապէս ընդունուի, Ֆրանսիայի դէմ կարող է դատական գործ յարուցել Մարդու իրաւունքների եւրոպական դատարանը, որն իրաւասու է հարկադրել Փարիզին՝ չեղեալ յայտարարել հակասական օրէնքը: Բացի այդ, եթէ Եւրախորհրդի նախարարների յանձնաժողովը նոյնպէս Ֆրանսիայի գործողութիւնները որակի անօրինական, կարող է Ֆրանսիային սպառնալ Եւրախորհրդից հեռացնելով», - Ֆրանսիային յիշեցում է յղում «Կոմերսանտ»-ը:

«Թըրքիշ Տէյլի Նիւզ»-ը «Ֆրանսիայի Ազգային ժողովը՝ արհամարհելով թուրքիայի, Եւրոպական միութեան եւ Ֆրանսիայի կառավարութեան յորդորները՝ ընդունել է վիճարկող օրինագիծը, այսպէս կոչուած, Հայոց ցեղասպանութեան հերքումը քրէօրէն դատապարտելի դարձնելու մասին: Սա ճգնաժամ է ստեղծում թուրք-ֆրանսիական յարաբերութիւններում: Օրէնքի ուժ ստանալու համար օրինագիծը պէտք է ընդունուի Սենատում եւ վաւերացուի նախագահի կողմից: Սա երկարատեւ գործընթաց է՝ եթէ Սենատում որեւէ լրամշակում արուի, օրինագիծը կը վերադարձուի Ազգային ժողով, որն այս կազմով աշխատելու է մինչեւ 2007 թուականի Փետրուարը, ինչից յետոյ տեղի կունենան նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններ»:

«Զերկալօ»-ը «Պաշտօնական Պաքուն արագ է արձագանքել, յայտարարելով, որ օրինագիծն անհեթեթ է եւ հակատրամբանական: Այդ մասին ասել է արտաքին գործերի փոխնախարար Նալաֆ Նալաֆովը: Միաժամանակ փոխնախարարն ասել է, թէ վաղաժամ է խօսել, և

պատասխան Ֆրանսիայի Ազգային ժողովի որոշման, ալժիրցիների ցեղասպանութիւնը Ատրպէյճանում ճանաչելու մասին: Պաքուն Ֆրանսիայի դեսպանատան մօտ տեղի է ունեցել բողոքի ցույց: Միլի Մեջլիսի մի խումբ պատգամաւորներ պահանջել են Ֆրանսիայի ներկայացուցչին հեռացնել Միւնխի խմբի համանախագահութիւնից: «Այդ հարցի լուծումը վերապահուած է նախագահ Իլհամ Ալիեւին», - ասել է ԱԳՆ խօսնակ Թահիր Թաղիզադէն եւ յաւելել, որ «հայերն անդադար որոնում են թշնամիներ եւ դրա հետ մեկտեղ խօսում տարածաշրջանում կայունութեան եւ վատահոլութեան միջոցառում ստեղծելու ցանկութեան մասին, համանախագահները պէտք է հասկանան, որ հայերի խօսքերն ու գործերը չեն համընկնում»:

«Լոս Անճելըս Թայմզ»-ը «Ֆրանսիայի վարչապետ Դոմինիկ դե Վիլլենը նշել է, թէ «եղնելով մեր փորձից, մենք կարող ենք ասել, որ այս հարցերում ճիշդ է օրէնքներ ընդունել»:

«Ալբիշ Թայմզ»-ը «Ֆրանսիայի ներքին գործերի նախարար Նիկոլա Սարկոզին անցած ամռանը Եւրոպայի հայերին հասցեագրած նամակում գրել է, որ «խորհրդարանի գործն է հաստատել բարոյական նորմերը, անցկացնել սահմանը թոյլատրելի եւ անթոյլատրելի միջեւ, որոշել, որ ցեղասպանութեան հերքումը օրինագանցութիւն է: Խօսքի ազատութիւնը պատմութիւնը կամայականօրէն ներկայացնելու, պատմական փաստերը ժխտելու ազատութիւն չէ»:

«Ֆայնենշըլ Թայմզ»-ը «Ֆրանսիայի Ազգային ժողովի ընդունած օրինագիծը վնաս է հասցնում Եւրամիութեանը թուրքիայի անդամակցութեան գործընթացին եւ սպառնում է խօսքի ազատութեանը բուն Եւրոպական միութիւնում»:

«Նեզալիսիմայա գազետա»-ը «Մելանխոլիա թուրքական եղանակով: Ստոկհոլմում այս տարուայ Նոպէլեան մրցանակը շնորհել են Օրհան Փամուքին: Նրան իր հայրենի թուրքիայում ոմանք ատում են, ոմանք էլ նրանով հպարտանում են: Այդ գրողը մի առիթով ասել է, որ «Հայոց ցեղասպանութիւնը եւ քրդերի հալածանքները ամենամեծ զաղտնիքն են, որ թաքցրել են թուրք ազգից»: Այդ արտայայտութեան համար Փամուքին թուրքիայում փորձել են դատական պատասխանատուութեան ենթարկել, սակայն Եւրոպայի ճնշումների շնորհիւ գործը կարճուել է»:

ԵՐԱՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԸՆՆԱԴԱՏԵԼ Է

Եւրայանձնաժողովը քննադատել է Ֆրանսիայի խորհրդարանի կողմից ընդունուած օրէնքը, որը պատիժ է սահմանում Հայոց ցեղասպանութիւնը հերքելու համար:

«Եթէ այս օրէնքն ուժի մէջ մտնի, այն կարգելի բանավէճը եւ երկխօսութիւնը, որոնք անհրաժեշտ են այս հարցի շուրջ համաձայնութեան հասնելու համար», - յայտարարել է ընդլայնման հարցերով Եւրամիութեան գործադիր մարմնի խօսնակ Քրիստինա Նեյգին:

Նրա վկայութեամբ, անդամակցութեան չափանիշները նոյնն են Եւրամիութեան անդամութեան բոլոր թեկնածուների համար:

«Թուրքիայի դէպքում Հայոց ցեղասպանութեան ճանաչումը նախապայման չէ», - ասել է խօսնակը:

Թուրքիայում Եւրախորհրդարանի պատուիրակութեան փոխնախագահ Էնտրիւ Դաֆը կարծիք է յայտնել, որ Ֆրանսիայում այսօր ընդունուած օրէնքը հակասում է մարդու իրաւունքներին վերաբերող եւրոպական օրէնադրութեանը, եւ կոչ է արել ֆրանսիական Սենատին մերժել օրէնքը:

«Ազգային ժողովը ոտնահարել է խօսքի ազատութեան հիմնարար իրաւունքը: Այն ուղղակիօրէն հակադրուել է Մարդու իրաւունքների եւրոպական կոնվենցիային, որի հիման վրայ է կառուցուել Եւրամիութիւնը», - ասել է Դաֆը:

«Ֆրանսիան մեծ վնաս է հասցրել Եւրամիութիւն - Թուրքիա յարաբերութիւններին եւ մեծ հաշուով՝ նաեւ Հայաստանի հետ Թուրքիայի յարաբերութիւններին: Թուրքիայի առաջադէմ ուժերը անհարկի հարուած են ստացել», - կարծիք է յայտնել եւրոպացի պաշտօնեան:

ՇՐՈՒՄ ՏԻՆԸ. «ՕՐԵՆԸ ՆՊԱՍՏ ԶԻ ԲԵՐԻ ԸԱՅՈՒԹԵԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՏԵՍԱԿԵՏԻՑ»

Ստամբուլում լոյս տեսնող «Ակօս» թերթի խմբագրապետ Հրանդ

Շար.ք էջ 16

ԱՊԱԿՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԿՐԱԺԵՇՏ Է

ԵՐԲԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱԿՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊԵՏՐՈՍ ԵՒ ՄԻԱՍԱՆԹՕ

ՄԱՐՈՆԵԱՆ

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"

Blue Shield of California Authorized Agent 1975-2005 30th ANNIVERSARY E-mail: BMaronian@AOL.com

ԱԶԳԱՅԻՆ

ՎԱՐՂԱՆԱՆՑ ՇԱՐԺՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

(ՆԱԽԱՏԵՍՆՈՒՄ Է ՎԱՐՂԱՆԱՆՑԸ 2007-ԻՆ ՆՇԵԼ ԸԱՄԱԶՊԱՅԻՆ ՄԵՑ ՇՈՒՔՈՎ. ԱՅՂ ԱՌԹԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ ՅՕՂՈՒԱԾԱՅԱՐԻ Գ. ՄԱՍՆ Է ՍՈՅՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ)

ԴՈԿՏ. ԳԵՂՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ
(Շարժակառնական խորհրդակցություն)

ԱՒԱՐԱՅՐԻ ԶԱԿԱՏԱՄԱՐՏԸ
Այս փուլը կարելի է բաժանել երեք ենթաբաժինի. ուժերի վերջնական դասակարգում, ճակատամարտի խորքի ու առաքելությունների բացառապատման եւ բուն ճակատամարտի:

Վարդանանք, որոնք հաւաքագրուել էին գաւառ առ գաւառ, շրջան առ շրջան, մարդ առ մարդ, ցրուած էին մարդպանութեան ողջ տարածքով մէկ: Նրանք ցրուած էին ըստ Վարդան Մամիկոնեան Սպարապետի հրամանով եւ պայմանների թելադրանքով: Նրանք սպասել կամ թաղուել էին բերդերում, տարբեր բնոյթի հաւաքատեղիներում, անստաններում, քարայրներում ու իրենց բնակարաններում: Նրանց մէջ են եղել նաեւ պարսիկներից ու վասակի ու նրա կողմնակիցների հալածանքներից փախած մարդիկ: Բանակին կամաւոր կերպով միանում է նաեւ հայ կղերականութիւնը Յովսէփ Կաթողիկոսի գլխաւորութեամբ, քանի որ նրանք այդ պատերազմը համարում էին ոչ միայն մարմնական, այլ հիմնականում «հեգեւոր առաքիլութեան կռիւ»: Վարդան հրահանգում է բոլորին համատեղուել Արտաշատում (հաւանաբար 451-ի Ապրիլի ամսին, Զատիկի տօնից յետոյ), որտեղ անցկացուել է զօրքի հանդիսաւոր ստուգատես: Ծանապարհին պարտութեան մատնելով պարսկական ուժերին, Վարդան Արտաշատում կազմում է իր կառավարութիւնը: Նա փաստօրէն վերականգնում է Արշակունեաց ժամանակաշրջանի գործակալութիւնները: Յիշենք, որ Վարդանանց Շարժումը իր ներքին տրամաբանութեան ուղղուած էր դէպի հայ պետականութեան վերականգնումը:

Արտաշատից ողջ վարդանանք, շուրջ 66 000 նուիրեալներ, Պենդեկոտաէի տօնի օրերին, շարժուել են դէպի հարաւ արեւելք՝ դէպի Մեծ Հայքի, Վասպուրական աշխարհի Արտազի դաշտը (Այժմեան Իրանի Մակուի մէջ, Զուլֆայի դիմաց): Այն գտնուում էր երեք գաւառների՝ Արտազի, Հերի եւ Զարեւանդի միջեւ: Նրա միջով հոսում է արդի Դեղին գետը (Զանգիմար), որը հնում կոչուել է Տղմուտ: Այդ նկատի ունենալով Փարպեցին այն անուանում է Տղմուտի դաշտ: Արտազի դաշտի արեւմտեան հատուածում է գտնուել նաեւ Աւարայր բնակավայրը: Եղիշէն էլ նախընտրում է այն կոչել Աւարայրի դաշտ: Աւարայրի դաշտը գրաւում է Արտազի դաշտի միայն մի մասը՝ արեւմտեան հատուածը: Վարդան նախընտրել է փոքր բանակով դիրքեր գրաւել ու կռուել փոքր դաշտում: Այդ այնքան էլ ձեռնառու չէր 90 000 մարտիկ ու 13 փիղ ունեցող բազմա մարդ պարսկական բանակին: Վարդան նախընտրել է թշնամուն ընդունել Հայկական հողից դուրս, բայց պարսիկներն արդեն Մուշկան Նիւսալուուրտի հրամանատարութեամբ հասցրել էին Փայտակարանից Թաւրիզի վրայով շարժուելով, Հեր-Զարեւանդ գաւառով անցնել էին Մարգարանական Հայաստանի սահմանը: Տղմուտ գետի հարաւային ափին պարսիկները դէմ դիմաց դիրք են գրաւում գետի հակառակ ափին՝ հիւսիսային ափին

գտնուող հայկական բանակին: Վարդան Մամիկոնեան ճառով դիմում է նուիրեալների բանակին, որտեղ բացատրում է տուեալ ճակատամարտի բնոյթը, նշանակութիւնն ու նպատակները: Նա նախ ընդգծում է, որ սոյն ճակատամարտը էպէս տարբերուել է բոլոր նախորդներից, քանի ու այն մարմնաւոր չէ, նիւթականի համար չէ, աշխարհիկ տիրոջ համար չէ եւ նրա ղեկավարն ու առաջնորդը մարդը չէ: Այս պատերազմը հոգեւոր ու իմացական արժէքների համար է: Այն պայքար է յանուն Աստուծոյ, յանուն հաւատի: Սոյն պատերազմի ղեկավարն ու առաջնորդը ինքը Աստուած է, որը եւ պիտի պարգեւատրի իւրաքանչիւրին: Եթէ մենք, շեշտում է Վարդան, մահկանացու թագաւորի համար հերոսութիւն ենք արել ու քաջաբար պայքարել, ապա ինչպիսի մեծ նուիրումով, հերոսութեամբ ու նուիրումով պէտք է պայքարենք յանուն անմահ Թագաւորի: Այս պատճառով էլ մենք հիմքեր չունենք վախենալու հակառակորդի բանակի մեծութիւնից եւ հզօրութիւնից: Նրանց յաղթելով մենք կը ոչնչացնենք նրանց հզօր-

թիւնը ու կը բարձրացնենք ճշմարտութիւնը: Վարդան յիշեցնում է իր գինակիցներին, որ իրենք «կեղծ կրօնափոխութեամբ» յաղթել են հեթանոսներին, որպէսզի միասնական ուժով կռուեն անօրէն իշխանի դէմ հայրենի աստուածատուր օրէնքների համար՝ այսինքն քրիստոնեայ Հայաստանի, Քրիստոսի հայ եկեղեցու, մեսրոպատառ հայ մշակոյթի համար: Նա յիշեցնում է իր գինակիցներին, որ վերջին ժամանակաշրջանում իրենք Աստուծոյ ղեկավարութեամբ յաղթել են թշնամու դէմ մղուած բոլոր մարտերում: Նա ընդգծում է այն գաղափարը, որ իրենք խելամիտ են դարձել, քանի որ Բարերար Տիրոջ տեսնում են իրենց մէջ: Նա իր ելոյթը աւարտում է հետեւեալ բառերով. «Վախը թերահաւատութեան նշան է. թերահաւատութիւնը մենք վաղուց ենք մերժել մեզանից. թող նրա հետ էլ վախն էլ փախչի մեր մտքերից ու խորհուրդներից»:

Իր ճառն արտասանելուց յետոյ Սպարապետ Վարդան Մամիկոնեան մտնում է ուղեւորների մէջ եւ լրացնում բոլոր պակասութիւններն ու թերութիւնները: Իր եւ ընկերների ունեցուածքից բաժին էր հանում այն գինուորականներին, որոնք ընչազուրկ էին: Զէնք չունեցողին մատակարարում էր գէնքով: Ում զգեստ էր պէտք՝ հագուատ էր տալիս: Ով ձի չունէր՝ նրան ձի էր տալիս: Բոլորին

առատօրէն պարէն էր բաժանում: Մեծ հաւանականութեամբ նման ռազմիկներ Վարդանի բանակին էին միացել Արտաշատից Աւարայրի դաշտ շարժուելու ճանապարհին, քանի որ Արտաշատում անցկացուել էր բանակի ամբողջական ստուգում ու մատակարարում: Այս նաեւ պատկերում է աշխարհագործի անընդհատ ներհոսքի մասին: Այդ վկայում է նաեւ ողջ բանակի միասնութեան, հրամանատարութեան ու շարքայիների միջեւ տիրող եղբայրական սիրոյ մասին: Այս աւանդոյթը հետագայում շարունակել են մեր ֆեդայական ջոկատների ղեկավարները, ի մասնաւորի Անդրանիկը: Այդպիսի վարք են վերագրում նաեւ Բ Աշխարհարտի Հայկական Դիւիզիայի հրամանատար Գեներալ Սաֆարեանին:

Վարդան շրջում էր բարձր տրամադրութեամբ ու լաւատեսութեամբ: Ամէն մէկին քաջալերում էր ու պատմում յիշատակութեան արժանի հերոսութիւնների եւ Սուրբ Գրքի հերոսների մասին: Ի մասնաւորի խօսում էր իրենց անկախութեան համար անսխալացիների դէմ պայքարող մակաբաշխիչների քաջութիւնների մասին, որոնք յիշատակում են Աստուածաշունչ մատնանում: Բանակում լայն քարոզչութեամբ էին զբաղւում նաեւ գինուոր-

Շար.ք էջ 19

COMMUNITY FORUM

Հրապարակային Ասուլիս

Sponsored by:
THE ARMENIAN COUNCIL OF AMERICA

PANELISTS:

Bill Bogaard
Pasadena City Mayor

Paul Little
Pasadena City Councilman

Bernard Melekian
Pasadena Police Chief

Dennis J. Downs
Pasadena Fire Chief

Dr. Percy Clark, Jr.
Pasadena Unified School Superintendent



Հրապարակային Ասուլիս Փաստօրէն Բաղադրի Ղեկավարութեան Հետ

COMMUNITY FORUM TO DISCUSS ISSUES OF CONCERN IN THE CITY OF PASADENA

Չորեքշաբթի, Հոկտեմբեր 25, 2006, 7:30 կ.ե.
Wednesday, October 25, 2006, 7:30 pm

The Armenian Athletic Association "Homenmen" Center
1060 N. Allen Ave, Pasadena

It's about your taxes, your kids' schools, your safety and your daily commute ...

It's about development, open space and sprawl...

It's about city resources and costs...

Refreshments will be served

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ՄԻԱՑԵԱԼ ԸԱՅԿԱԿԱՆ ՖՈՆՏԸ ԱՅՍ ՏԱՐԻ ԾՈՎԱՅԻՆ ԱՐԿՂԵՐՈՎ \$6.2 ՄԻԼԻՈՆԻ ՆՊԱՍՏ ՈՒՂԱՐԿԱԾ Է ԸԱՅԱՍՏԱՆ

Մարդասիրական թուիչ քննարկողներն, Միացեալ Հայկական Ֆոնտը ծովային արկղերով եւս օգնութիւն կ'առաքէ Հայաստան: 2006ի առաջին ինը ամիսներուն, Միացեալ Հայկական Ֆոնտը 93 ծովային արկղերով \$6.2 միլիոն արժողութեամբ մարդասիրական նպաստ ուղարկած է Հայաստան:

«Միացեալ Հայկական Ֆոնտը շնորհակալութիւն կը յայտնէ մեր բոլոր նուիրատուներուն, որոնք առատաձեռնօրէն զանազան մարդասիրական պիտոյքներ յատկացուցին Հայաստանի օգնութեան համար», յայտնեց Միացեալ Հայկական Ֆոնտի նախագահ Յարութ Սասունեանը:

Այդ նուիրատուներն են՝ World Vision U.S. Inc. կազմակերպութիւնը (\$1.2 միլիոն արժողութեամբ), Հայ Աւետարանական Առաքելութիւնը (\$459,000), Hope for the City կազմակերպութիւնը (\$439,000), Բժշկական Օգնութիւն Հայերուն կազմակերպութիւնը (\$365,000), Centre Hospitalier Lucien Hussen հիւանդանոցը՝ Ֆրանսա (\$312,000), Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութիւնը (\$293,000), World Vision Canada հիմնարկը (\$251,000), Vahe Enterprises հաստատութիւնը (\$244,000), Միհրան Մասմուզեան եւ ձէք Մազմանեան (\$235,000), Hilland Corporation հաստատութեան կողմէ՝ Տէր եւ Տիկ. Ռուպիկ եւ Կիրոս Ասատուրեան (\$221,000), Help the Childre International երեխաներու բարեսիրական հիմնարկը (\$206,000), Ժիւլիէթ Սրապեան՝ Ֆրանսա (\$184,000), Հայկական Օգնութեան Ֆոնտը (\$180,000), Գանատահայ Բժշկական Ընկերակցութիւնը՝ Օնթարիօ (\$170,000), Հայաստանի Բարեկամները կազմակերպութիւնը (\$162,000), եւ Վենետիկի Շրջանային Քաղաքապետական Խորհուրդը (\$112,000):

Հետեւեալ կազմակերպութիւններն ու անհատները եւս կատարեցին նուիրատուութիւններ - Հայաստանի Ակնաբուժական Ծրագիրը (\$73,000), Բժ. Վարդգէս Նաճարեան (\$72,000), Սեմրա Հիմնարկը՝ Չուիցերիա (\$71,000) ճորճ Ասատուրեան (\$67,000), Development Services for Armenia կամգկակերպութիւնը (\$67,000), Շէն Հիմնարկը՝ Ֆրանսա (\$56,000), Հայ Հայրենակիցներու Օգնութեան Միութիւնը՝ Ֆրանսա (\$54,000), Կլէտէյլ-Ղափան Քոյր Քաղաքներու Միութիւնը (\$51,000), Մայքըլ Քէնտըն (\$51,000), Կաթողիկէ Բժշկական Առաքելութեան Վարչութիւնը (\$50,000), Մեծն Բրիտանիոյ Հայկական Եկեղեցիները (\$47,000), Պերճ եւ Թէրի Մինասեան (\$46,000), Komitas Action Suisse-Armenia կազմակերպութիւնը՝ Չուիցերիա (\$40,000), AmeriCares կազմակերպութիւնը (\$37,000), Sacred Heart բժշկական կեդրոնը (\$36,000), Ֆրեզնոյի Հայկական Ռատիօնը (\$36,000), Konnecto9 World Wide կազմակերպութիւնը՝ Մեծն Բրիտանիա (\$36,000), եւ Հայաստանի Ամերիկեան Համալսարանի Ընկերութիւնը (\$35,000):

Նուիրատուութիւններուն մասնակցեցան նաեւ Հայ Մշակութի Ռուսումնասիրութեան ու Վաւերագրութեան կեդրոնը՝ Իտալիա (\$33,000), Christlicher Hilfsbund im Orient հիմնարկը՝ Գերմանիա (\$32,000), Ալվան Յարիք հիմնար-

կը՝ Հոլանտա (\$30,000), Բժ. ճորճ Քաչերեան (\$30,000), Թորգոմ Փոստաճեան (\$26,000), Կարապետ Գոյումճեան (\$22,000), Shoebox Sharing կազմակերպութիւնը (\$18,000), Ալքարամ Օկանէսեան (\$18,000), Հայ Օգնութեան Միութիւնը՝ Գերմանիա (\$15,000), եւ Նորք Մարաշ Բժշկական կեդրոնը (\$14,000):

1989էն ի վեր, Միացեալ Հայկական Ֆոնտը 140 թուիչ քննարկող եւ 1,359 ծովային արկղերով \$447 միլիոն արժողութեամբ մարդասիրական նպաստ ուղարկած է Հայաստան:

Միացեալ Հայկական Ֆոնտը համատեղ աշխատանքն է Ամերիկայի Հայկական Համագումարին: Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան, Հայ Օգնութեան Միութեան, Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Առաջնորդարանին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդարան եւ Լինսի Հիմնարկին:

Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ՊԱՐԵՏ Ծ. ՎՐԴ. ԵՐԷՑԵԱՆ

Հ.Բ.Ը.Միութիւնը հիմնուած է եգիպտոսի Գահիրէ քաղաքին մէջ 1906 Ապրիլ 15-ին, Պօղոս Նուպար Փաշայի հովանաւորութեամբ: 1906 թ. Մայիս 1-ին Հ.Բ.Ը. Միութիւնը կը հրատարակէ «Հրաւէր առ համօրէն Հայս», որ կը յայտարարէր իր գործունէութեանց հիմնական նպատակները:

Կորսնցնելու ժամանակ չկար: Արհաւիրքը ոգիի նման կը սաւառնէր ամբողջ պատմական Հայաստանի վրայ, ամենուրէք վայրագութիւն եւ սովամահ թշուառներ:

Յեղին ձայնն էր, ապրիլ ուզող ժողովուրդին կամքն էր, որ ոտքի պիտի կենար, եւ աշխատանքի պիտի լծուէր: Հայ ժողովուրդին էութիւնն էր որ ցնցուած էր:

Երախտաւորներու հոյժը «Հայցու հոգիով եւ պապակով», անշահախնդիր, ամբողջական ընծայումով իրենց հոգիին՝ ստեղծեցին Հ.Բ.Ը.Միութիւնը, որ մեր պատմութեան վերջին 100 տարիներուն դարձաւ շքեղ իրագործումը մեր զգացումներուն, մտածումներուն եւ կարիքներուն:

Նպատակը անոր եղաւ սուրբ եւ


նուիրական: Գերազանցապէս ազգային եւ հայրենաբոյր, նախանձախնդիր մեր պատմական արժէքներուն, եկեղեցի, դպրոց, մշակոյթ, ընկերային ծառայութիւն, որբանոց, եւայլն, բարձրօրէն տիպարային իր պատկառանքովը:

Հ.Բ.Ը.Միութիւնը մեր ժողովուրդին կարիքներուն սպասարկութեանը դրաւ իր ոգին, սէրը, գուրգուրանքը: Անաւարկելի է իր դերը մեր ժողովուրդին մահուան գալարումներէն ազատագրելու իր ճիգին մէջ: Դարձեալ անաւարկելի է իր դերը մեր մշակոյթին հանդէպ ունեցած իր խանդաղատանքովը: Ան դարձաւ մեր ժողովուրդին ամենամեծ սրբութիւններէն մէկը:

Հ.Բ.Ը.Միութիւնը իր բոլոր արձանագրած իրագործումներով արժանաւորապէս պիտի անցնի մեր ժողովուրդին պատմութեան թանգարանին մէջ:

Այո՛, այս շարժումը ստեղծողը եւ անոր շարունակականութիւնը ապահովողը անձեր էին՝ ինչպէս անզուգական երկու բարերարներ Պօղոս Նուպար Փաշա եւ Ալեք

Շարք էջ 15




LARK MUSICAL SOCIETY

LARK MUSICAL SOCIETY
Presents:

Wolfgang Amadeus Mozart
Celebrating the 250th anniversary of his birth
Requiem in D Minor

Concert dedicated to the memory of
Mgrdich "Mego" Hovsepi Fidanian



SOLOISTS

Alenoush Yeghnazar.....soprano
Garineh Avakian.....mezzo soprano
Daniel Plaster.....tenor
Ara Kourouyan.....bass

Lark Chorus and Orchestra
VATSCHÉ BARSOUMIAN Conductor


Sunday, October 22, 2006, 6:30 pm.

Glendale Presbyterian Church
125 South Louise, Glendale

DONATION

\$40, \$30, \$20

For additional information call: 818.500.9997



W. A. Mozart

ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 86-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁ

Շարունակում է իր 86-րդ տարեգիրքը

տալուր ու ժրջան վարչությունը կազմակերպած էր հոգեճաշ, ՀԲԸՄ-ի Պոյաճեան հանդիսարանին մէջ, ժամը մէկէն սկսեալ: Ներկայ էին աւելի քան 300 հայրենակիցներու խումբերամ բազմութիւն մը, որ բոլորուած էր սիրոյ սեղաններու շուրջ: Վարչականներու եւ Տիկնանց Օժանդակ Յանձնախումբի անդամներու կողմէ ներկաները հիւրասիրուեցան աւանդական մատաղով ի յիշատակ նահատակներուն:

Երբ հայութեան «դաշնակից» տէրութեան մը դիւանագետն է վկայողը, մեր կողմէ յաւելեալ ամեն բացատրութիւն կամ մեկնաբանութիւն աւելորդ պիտի ըլլար:

Նշենք սակայն, թէ բարեխիղճ դիւանագետին կառավարութիւնը (անգլ-իական) նուազ դրուժան չգտնուեցաւ յետագային Կիլիկիոյ հայութեան հանդէպ, ամեն տեսակետով հաւասարելով իր «դաշնակիցին»: Ֆրանսայի, Քեմալական թուրքիան դարպասելու եւ Հայկական Կիլիկիոյ ուր իր բնիկ հայ բնակչութեան մահալծիքը ստորագրելու մէջ:

Բայց ասիկա ուրիշ պատմութիւն է...:

ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԿԻԼԻԿԻՈՅ ՄԷՋ
Փոխանցում Մերսիսիւն ստացուած հեռագրի մը պատճենին, որ կը նկարագրէ անկունը Հաճընի եւ ամբողջական ջարդը անոր հայ պաշտպան-ներուն եւ գիւնաբախուժն ու բանտարկութիւնը հայ կամաւորներու՝ Ֆրան-սական իշխանութեանց կողմէ:

ՏԱԿԸ ՉԵՈՒԳԻՐՈՎ ԱԲԵԼՅՈՒԹՅՈՒՆ
Հաճընի անկունը, 7 ամուսայ դիմադրութեան վերջ, ամենասարսափելի ողբերգութիւնն է: Ազգերու Դաշնակցութիւնը չի՞ կրնար ֆրանսացիներէն պահանջել ամբողջական եւ մանրամասնեալ տեղեկագիր մը պատահածին մասին:
Տես նաեւ Ռ. ՍԲ ՏՕՒԷԼԼ
Ե՛ 14690 2-10-20

Հոս Պրն. ՄԲՏօնէլը սխալած է թուականը, պէտք է գրեք 2-11-20:

Անդին մնացող անգէնները գին-եալներուն հետքը կորսնցնելով իրենց տեղի վրայ կը փճանան: Ուրիշ մեծ խումբ մը Ղասապ Հաճիի ղեկավա-րութեամբ Քէօթիւնի վրայ կը յար-ձակի եւ կը փճանայ: Ուրիշ հարիւր քան հոգիներ խումբ մը Արշակ Սահակեանի ղեկավարութեամբ՝ Քի-րազի, Թափանի վրայով կը քալեն եւ գրեթէ կը փճանան: Իսկ Հաճըն մնացողներուն վիճակը մտածել ահ-ուելի է:

Միայն, մեծ խումբը Սաղըր Սէքիէն դէպի Հաճըն խուժելով, գիշերանց, առանց շշուկի Աթմա ելաւ, եւ Հոկտեմբեր 18ին Աթմա պահուրտող 27 հոգին անոնց միա-ցաւ եւ այս միացեալ խումբին քանակը եղաւ 387, որոնց 350ը գինուած էին: Անոնք 4րդ օրն էր որ Հաճընէն ելել էին եւ անքուն, անօթի կը թափառէին: Վերջապէս կ'որոշեն ցորեկին քալել եւ Եաղպասան գաւա-ռի Ղարաղուլու գիւղի գիւղապետ Հասան Քէհեայի տունը՝ հասնիլ ու կշտանալ: Այս որոշման համաձայն հանգիստ հասան միեւնոյն օրուան իրիկունը, Հասան Քէհեայի տունը, 1920 Հոկտեմբեր 18: Այդտեղէն բաւական պաշար ձեռք ձգելէ յետոյ

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»
ՇԵՐՈՒՍԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
(ՎԼԵՆՏԷՅԼ, ՊԸՐՊԵՆՔ, ԼԱ ԲՐԵՍԵՆՅԱ)
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵՎԱՆԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ 10:00-11:00

ՎԱՐՑԱԶՐՈՅՑ

**ՎԱՐՑԱԶՐՈՅՑ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՅԱԿՈԲ ՎԱՐԱՆԻ ՎԵՏ
ՈՐՆ Է ԾԻԱԾԱՆԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՅՆԸ
ԿԱՍ ՓՈՐԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԵՋ ԷԼ ԿԱՐԵԼԻ Է
ՄԵԾ ՊԱՏԱՐԱԳ ԱՆԵԼ**

**ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՎԱՐՆԵՑ
ԱՐՈՒԵՍՍԱԳԷՏ ԳՐԱԿԱՆԱԳԷՏ
ԳԱՐՈՒՇ ՀԱՅԵԱՆՆԵՑ**

- Երեք տարի առաջ ես ձեր ու ձեր արուեստի մասին տպագրեցի մեծ յօդուած «Մասիս» շաբաթաթերթում: Արձագանգքները դրական եղան: Ինձ գոհացրեց, ձեզ էլ: Կարծում եմ, որ լռութեան երեք տարիները բաւական բաներ են փոխել: Դուք նաեւ կորուստներով էք հարուստ: 200 նկար էք կորցրել: Դժուար չէ՞ յիշողութեամբ դրանք վերականգնել: Եթէ այդ ապա ինչպէ՞ս: Եթէ ոչ, ինչո՞ւ ոչ:

- Լռութեան երեք տարիները հենց այնպէս չեն ացնել, այդ ընթացքում մեծ քանակի նոր նկարներ են ստեղծուել եւ թղթի եւ թէ կտանների վրայ: Եղաւ մի պահ, երբ հասկացայ, որ հասել եմ որոշակի վերջնական արդիւնքի: Այդ օրը, ուրախացած հաւաքեցի համարեա այն բոլոր նկարները, որոնք կատարուած էին թղթի վրայ եւ ցանկացայ ցուցադրել: Սակայն հենց այդ օրը, մի մեծ նկարչական թղթապանակով ամբողջ կորցրի, գողացուեց: Զարմանալի բան: Ծուռով մէկ տարի կը լինի, ոչինչ չգտնուեց: Կորուստներ էլի եմ ունեցել, բայց այս, ինձ համար շատ ծանր էր, հինգ տարուայ ընթացքում էր այն հաւաքուել: Որոշեցի նոյն քանակը նորովի ստեղծել: Ութ ամիսների ընթացքում, մօտաւորապէս այդ ինձ չաջողուեց: Ինչ խօսք նոյնը չէ, ինչ կորցրել եմ: Վերականգնել կամ յիշողութեամբ դարձեալ նկարել պարզապէս հնարաւոր չէ: Եթէ լինէր մէկ երկու նկար գուցէ հնարաւոր լիէր: Ինչու հնարաւոր չէ՞, նախ այդ նկարները վերացական գեղանկարչական ընհանուր ձեւի մէջ կոչուում է կամ կարելի է անուանել էջեֆտիվիզմֆանտաստիկֆոտոլիզմ: Հարուստ գունաւոր էֆեկտ թողնող, որը մի ընթացքով է կատարուում, կրկնել որ նոյնը ստացուի կամ յիշողութեամբ վերականգնել՝ լուրջ չէ: Աւելի լաւ է եւ շատ աւելի հեշտ, նորը ստեղծագործելը: Այնպէս ինչպէս ես արեցի: Այստեղ մի ուրիշ հարց կայ, որը ինձ անհանգստացնում է, ի՞նչ է մտածում այն մարդը ում ձեռքին է գտնուում իմ նկարները: Անհրաժեշտ է ասել, որ իմ փոքր չափի թղթի վրայ վերացական նկարները հանդիսանում են այդ ոճի մանրանկարչութիւնը, որի նմանը այսօր դեռ ոչ մի նկարիչ աշխարհում նման բան չի ստեղծել: Այդ նկարների մի մասը էթերում ցուցադրուել է: Ցուցադրուել է նաեւ այլ առիթներով, մինչեւ այդ նկարները մեծ մասի կորցնելը: Այդ նկարները կատարուած են տարբեր ներկերի, նայած այդ պահին ինչ եմ ունեցել ձեռքի տակ: Թղթի վրայ կատարուած նկարներով եւ կտանների վրայ նկարածներով կարելի է հրատարակել գունաւոր նկարչական շուրջ 6 գիրք ալպոմներ, որ ինչպէս «Համայնապատկեր» հանդէսում իմ ելույթում յայտնել եմ անշուշտ կախուած է մեծ ծախսերի հետ: Այդ գիրք ալպոմները կը հարստացնեն հայկական վերացական գեղանկարչական լաւագոյն նմուշների շարքը:

- Ինձ միշտ հետաքրքրում է ձեր պատկերացումը վերացական գեղանկարչութեան վերաբերեալ: Ինչ էք կարծում, վերացականի դպրոց կամ ուսուցիչ լինում է:
Կարող է լինել, չասեմ դպրոց աւելի շուտ գեղանկարչական դասարան, որտեղ դասարան յայտնի, եւ ցուցադրել վերացական նկարչութեան նմուշներ, նկարներ: Անձամբ ես քանի որ նկարչութիւն եմ սովորել աշօրուանից 50-70 տարի առաջ, վերացական խօսքը եւ գործը, շատ ուշ եմ արժէքը հասկացել: Ամերիկայում շատ մեծ գրականութիւն կայ ամէն տեսակի հարցերի եւ երեւոյթների վերաբերեալ, բայց քանի որ դպրոցական եւ այնուհետեւ էլ սովորել եմ Գերմաներէն, ես չգիտեմ ինչ է գրուում Անգլերէնով այդ մասին: Իսկ թէ ինչ է գրուում հայկական թերթերում եւ ամսագրերում այսօր, ասեմք թէկուզ Արշիլ Կորջու մասին, որը հանդիսանում է Ամերիկեան վերացական նկարչութեան հիմնադիրը, կարող եմ ասել, ոչ մէկը մինչեւ այսօր ոչինչ չեն գրում Կորջու այն աշխատանքների մասին, որոնք իսկապէս վերացական են: Միշտ էլ խօսուում է նրա սկզբի ոչ մեծ քանակի այն նկարների մասին որոնք վերացական չեն: Այսպիսի պայմաններում, ես կարող եմ, խօսել միայն իմ սեփական փորձից ելնելով: Ես ունեմ իմ պատկերացումը, որը ինձ համար ամբողջական է, բայց այդ ամբողջական ես կը ներկայացնեմ աւելի ուշ երբ դրա անհրաժեշտութիւնը կը լինի վերացական նկարը պէտք է լինի ստեղծագործական, բնութիւնից արտանկարած չպէտք է լինի, սակայն հասկանալի է ինչ էլ որ լինի բնութեան արգասիք է, լաւ որ լինի այդ շոյող, գեղեցիկ, իմաստաւորուած, անգամ չիմաստաւորուած, ինչպէս սովորական պատկեր: Հնարաւոր է նկարը սկսելուց առաջ նկարիչը տրամադրուած լինի եւ ինչու չէ, որոշի որ նկարը նորութիւն լինելուց բացի ուշադրութեան արժանի լինի շրջապատին: Բայց նկարիչը կարող է նկարել անգամ սկզբում շատ անպատրաստ: Վերացական գեղանկարչութեան մասին լրիւ վերացական կամ մասամբ, երբ որոշ իրեր կամ պատկերներ են լինում բնութիւնից: Այսպիսով վերացական նկարը լաւ թէ թերութիւններով, նա ստեղծագործութիւն է, բնութիւնից արտանկարչութիւն չէ: Կարելի է աւելի ասել եւ դեռ որոշ փակագծեր առանց բացելու կարելի է խօսել ներքին մարդկային ներդաշնակութեան վրայ էմոցիայի ազդեցութիւնը զգացումից ու գեղեցիկի զգացողութեան պահանջը հանդիսանայ, որը պէտք է լինի ամէնուր: Կայ նաեւ ֆանտաստիկ եւ առանձնապէս մեծ ճաշակ ունենալու դրսեւորումների անհրաժեշտութիւնը: Այստեղ առանձնապէս մեծ կարեւորութիւն է ժամանակին ըմբռնելը

պատկերի ճիշտ կատարեալ, վերջնական լինելու հանգամանքը, այս ամէնը պէտք է իշխի ամբողջ վրայ: Ընդհանրապէս ընդունուած ձեւ է, երբ ուսուցիչը յանձնարարութիւն տալու ժամանակ, դասաւանդման ընթացքում չի միջամտում եւ թողնում է ուսանողի կամքին, բայց միաժամանակ հետեւում է, երբ անհրաժեշտ է լինում: Այստեղ Ամերիկեան քոլեջի բոլոր արուեստին պատկանող դասարանները անցել եմ, կարող եմ ասել որ ուսուցիչները, որոշ չափով քաջալերում էին այն ուսանողներին, որոնք փորձում էին վերացական նկարել: Որովհետեւ ուսանողը կարող է արդիւնքի չհասնի: Այսինքն համարձակութիւն ունեցողները քիչ էին, որովհետեւ փորձուած թանը աւելի լաւ է, քան անփորձ մածուցը: Ունեցել եմ ուսուցիչ, որ իր դասի ժամանակ պատասախ վրայ ցուցադրել է իր վերացական նկարները առանց մեկնաբանութիւնների:
- Վերացականի ասելիքը թաքնուում է՞ թէ ոչ: Ըմբռնելի են նրա արտայայտչամիջոցները:
- Եթէ մի բան թաքնուած է, ասեմք թէ՛ նա միժամանակ մշուշապատ, խորհրդաւոր է: Ինչպէս արգելուած պտուղն է քաղցր, այնպէս էլ հետաքրքիր է ինչ եւ որտեղ է թաքնուած, երբ մերկութիւնը թաքցրած է այն շատ աւելի խորհրդաւոր ու հետաքրքիր է քան բացայայտը: Այնպէս որ, պէտք չէ մտածել, որ եթէ ասելիքը թաքնուած է դա վատ է, ընդհակառակը, միայն թէ իսկապէս հնարաւոր լինի թաքցնել, այդ նոյնպէս մեծ վարպետութիւն է: Ի հարկէ, վատ չէ եթէ նկարում եւ առհասարակ խորհրդաւոր թաքնուած վիճակներ է լինում: Նկարչութիւնը գիտութիւն չէ: Ճիշդ չէ, երբ նկարին ասում են չեմ հասկանում: Վերջապէս նկարիչը կարող է նպատակ չի ունեցել, որ իր նկարը ըմբռնելի լինի, չնայած սրան դիտողներից շատերը իրենք իրենց համար շատ բան են գտնում, ըմբռնում:
Գեղանկարչական վերացական արուեստում մարդուն տրուում է հնարաւորութիւն, որ ինքը իր հայեցողութեամբ մտնենայ: Ինքը կողմնորոշուի եւ ստեղծագործական վարքագիծ ունենայ, ձեռք բերի: Վերացականի արտայայտչական միջոցները ըստ ընկալողի՝ ըմբռնելի են, հետաքրքիր եւ բազմաբնոյթ: Վերացական գեղանկարչութեան համար «հասկանալ-չհասկանալ» փոխարէն անհրաժեշտ է որոշել նկարը ստացուել է, ըմբռնելի, ընդունելի, վերջացրած է, մնացած գեղագիտական հարցերն էլ իր հերթին: Նաեւ կարող է լինել առողջ կամ անառողջ երեւակայութեան արդիւնք: Միշտ չէ եւ ոչ էլ պարտադիր է, որ նկարը ասելիք ունենայ: Սակայն լաւ, գերազանց է, եթէ նկարը խօսում է եւ ասելիք էլ ունի: Վերացական գեղարուեստական նկարը ամէն մարդ իւրովի կարող է իւրացնել: Սակայն եւ կան վերացական նկարիչներ, որոնք

հոգեկան աւելի լուսաւոր պահեր են ունենում եւ շատ աւելի են տեսնում եւ իրենց գարմանահարաչ նկարները համարում են տիեզերքի ու աստուածային ձեռքի շնորհք, ի վերուստ տրուած առատ:
- Ձեր նկարների ընկալման ազատութիւնը դուք էք տալիս, վերջնական պատասխան ունի վերացականի բերած ինչուիմ:
Նկարը ես եմ տալիս, իսկ ընկալման իրաւունքը, ազատութիւնը ինքը նկարն է տալիս, անգամ եթէ նախօրօք նկարին անուն տուած լինեմ: Սովորաբար նկարի անունը տրուում է նկարի հուլիանից ելնելով, սակայն չի բացառուում երբ անունը ամենեւին էլ չի բնորոշում նկարի իմաստը վերջին հաշուով նկարի ընկալումը, անունը կարող է նկարիչը ինքը որոշի ըստ իր զգացողութեան ու իրաւունքի:
- Դուք ոչ միայն հետաքրքիր, ինքնատիպ արուեստագետ էք, այլեւ բանիմաց գրուցակից, ում հետ միշտ կարելի է աներկիւղ մտքեր փոխանակել: Ո՞րն է ձեր հաւատաւոր բանալի կերպարուեստում: Ի՞նչ ենթատեքստ էք հետապնդում:
Մարդու ամենամեծ, լաւագոյն յատկութիւնը անկեղծ ստեղծագործական միտքն է: Որը անգամ պէտք է ֆիզիքապէս աշխատանք կատարողին եւ ամէնից կարեւորը մինչեւ երկրի նախագահին: Այ թէ նախագահը ունենար... Հաւատամքի բանալին չի կարող մէկը լինել, մի բանալիով չես բացի բոլոր դռները: Սակայն եթէ աւելացնենք նակեղծութիւնը, ազնուութիւնը, խիղճը, արդարութիւնը եւ մնացած լաւագոյն յատկութիւնները եւ ձեւերը, որոնք պէտք են բոլորին եւ յատկապէս կերպարուեստում հաւատամքի բանալի փնտռողին, այդ դէպքում ոչ միայն արուեստում, այլեւ ստեղծագործող ամէն մի անհատ կարող կը լինի գտնել իր հաւատամքի բանալին: Քրիստոսից յետոյ թէեւ մարդկութիւնը անասելի գարգացման հասաւ, բայց մարդը իր հուլիանամբ ոչ միայն չմնաց անգամ նոյն մակարդակին, այլեւ աւելի սարսափելի վայրագ դարձաւ, յանձինն Օսման ազգայնամոլների: Նրանց յօշոտող ձեռքը ոչ ոք ինչպէս որ պէտք էր չբռնեցին, դեռ այսօր էլ այդ ձեռքը ընդունակ է աւելի սարսափելի իրագործելու: Ինչպէս ամէն մի արուեստագետի՝ այնպէս եւ իմ նպատակն է հասնել լաւագոյնին, այդ ճանապարհին յաղթահարելով առկայ դժուարութիւնները: Թէեւ իմ խօսքը վերացական գեղանկարչութեան մէջ ես ասել եմ, բայց դեռ չեմ հասցրել այն ամբողջական ներկայացնել: Այս առումով դժուարութիւնը հիմնականում հրատարակչական աշխատանք է եւ այն ընդհանուր մակարդակը, որը ինձ կը բաւարարի: Սա հենց կը լինի իմ հաւատամքի բանալին եւ ենթատեքստը:

(Շարունակելի 1)

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին**

Jessica Demirdjian
REALTOR®
**Prudential**
California Realty
9878 Hibert Street
San Diego, CA 92131
Bus 858 653-6400 Fax 858 653-6440
Cell 619 846-7738 jessicad@prusd.com
An independently owned and operated member of Prudential Real Estate Affiliates, Inc.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆԴՐԱԴՐՈՂ ՂԱՐԱԲԱՂՈՇ ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ

ԴՈԿՏ. ՏԷՐ ԶԱԽԷՆ Ա. Ք. ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆ

Պատմական Արցախի նահանգի (Ղարաբաղի) ներկայ կացությունը պատիւ միայն կը բերէ հայ ժողովուրդին, մասնաւորաբար Արցախի հերոսական ժողովուրդին, որ այսօր յանուն բազմաթիւ հայ նահատակներու անկախութեան դրօշը պարզած է իր Նախագահ՝ Արկաղի Ղուկասեանով եւ պետական կառուցող, իր պատմական հայ եկեղեցուց թեմով ու Առաջնորդ՝ Պարգեւ Արքեպս. Մարտիրոսեանով, վանքերով ու նորաշէն եկեղեցիներով, դպրոցներու ցանցով ու մշակութային հաստատութիւններով, Ստեփանակերտ մայրաքաղաքի ծաղկուն եւ արթուն ղեկավարութեան ներքեւ:

Յարափոփոխ դրական այդ բոլոր իրադրոժներու ջիղն ու ողնայարը եղան գոյգ մը լայն մայրուղիները որոնք հիւսիսէն հարաւ ու արեւելքէն արեւմուտք ամփոփեցին ու կապեցին քաղաքներն ու գիւղերը, գլխաւորն անոնցմէ՝ Գորիսէն Ստեփանակերտ մայրուղին որ չիրաւի կցեց Հայաստանը Արցախին, լեռնաշխարհի մը լանջերէն օձապտոյտ յառաջանալով դէպի մայրաքաղաք եւ Շուշի:

Այսուհանդերձ ընթերցողներ պարտք պիտի գգան Ղարաբաղի անմիջական անցեալի պատմական իրականութեան տեղեակ մնալու, որմէ այդ պատմական տիրոջը ազատագրութեամբ մօտ 20 տարիներ առաջ Ատրպէյճանի անիրաւ տիրապետութենէն քաջարի հայ զինեակներու արեան զինով ու նահատակութեամբ, Սոււմգայիթի ջարդէն սկսելով, երբ ահագանգը տրուեցաւ հայոց աքսորին ու Ատրպէյճանէն միանուազ հեռանալուն:

Ատրպէյճանի սահմաններէն ներս գտնուող Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը դառն եղաւ Սովետական տիրապետութեան առաջին տարիներուն, երբ հայկական այդ տիրոջը անիրաւօրէն յանձնուեցաւ Ատրպէյճանի: Պատմական Արցախի այս նահանգը մեր օրերուն պիտի յուզէր հայու անմեռ յոյսն ու իղձը, գայն միացնել կարենալու Հայաստանին որուն մասն եղած էր մօտաւոր անցեալին:

Հարկ է ուրեմն այդ մեծ գեղծարարութեան ներքին ծալքերը ամփոփ գիծերու մէջ ներկայացնել, տեսնելու համար որ, նախ Ատրպէյճան եւ ապա Սովետական իշխանութիւնը քմահաճօրէն շրջեցին իրենց Հայաստանի ի նպաստ քուէարկած որոշումը, Ղարաբաղը անջատելով Հայաստանէն: Երբ 1920 Ապրիլ 28-ին Ատրպէյճան Սովետական տիրոջը դարձաւ, երկրին նախագահ Ն. Նարիմանով Հայաստանի Հանրապետութիւնը տկարացնելու միտումով, ի նպաստ Սովետական ուժերու յառաջացումին, պահանջեց որ Ղարաբաղը, Նախիջևանը եւ Զանգեզուրը Ատրպէյճանին միացուին: Ասոր համաձայն չէր սակայն Սովետական կառավարութիւնը, որ Լեւինիի ղեկավարութեան այդ օրերուն կը պնդէր թէ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ վիճելի տարածքներու որոնց պատկանիլը յետաձգուելու էր մինչեւ քաղաքական բարեկարգ պայմաններու ստեղծումը:

Յիրաւի, երբ Հայաստան սովետական դարձաւ, յաջորդ օրն իսկ, ինդրոյ առարկայ հողամասերը Հայաստանի անջակտելի մաս յայտարարուեցան, ի հեճուկս Ատրպէյճանի

նի նախագահ Նարիմանովի պահանջին: Ատրպէյճան իսկոյն 1920 Դեկտ. 1-ի յայտարարութեամբ հրաժարեցաւ պնդել իր այդ պահանջին վրայ՝ յօդուտ Հայաստանի, յատկօրէն ըսելով որ «այսօրուանից Հայաստանի եւ Ատրպէյճանի նախկին սահմանները յայտարարուած են վերացուած, եւ Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը եւ Նախիջևանը ճանաչուած են Հայկական Սովետական Հանրապետութեան անջակտելի մասը»:

1920 Դեկտ. 12-ին, երբ Հայաստանի ներկայացուցիչներ Ս. Տէր Գաբրիէլեան եւ Ա. Մուսաբեկ Մոսկուայի մէջ հանդիպում մը կ'ունենային Վ.Ի. Լենինի հետ, վերջինս հետաքրքրուած էր հայկական վիճելի հողային տարածքներով, որուն Տէր Գաբրիէլեան պատասխանած էր թէ «այդ հարցերը գտել են իրենց ճիշդ լուծումը»: Դրական այս վճիռը ողջունելի եղաւ անշուշտ Հայաստանի կառավարութեան կողմէ, որուն նախագահը՝ Սարգիս Կասեան, Պաքու Նարիմանովին հեռագրեց «եղբայրական հրճուանքով» լսած ըլլալու մասին Ատրպէյճանի կառավարութեան Դեկտ. 1-ի որոշումը հայկական երեք նահանգներուն վերաբերեալ:

Ասոր հետեւեցաւ պաշտօնական յայտարարութիւն մը «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 1921 Յունիս 19-ի համարին մէջ, ուր կը տեղեկացուէր թէ «յետայսու Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է Հայկական Սովետական Հանրապետութեան անջակտելի մասը»: Միաժամանակ Հայաստանի կառավարութիւնը Ասքանազ Մուսաբեկին նշանակեց արտակարգ լիազօր Լեռնային Ղարաբաղի, սակայն հայ ժողովուրդի ուրախութիւնը խոր յուսախաբութեան վերածուեցաւ կարճ ատեն մը ետք, երբ Ատրպէյճան նենգօրէն փոխեց իր դիրքն ու առած որոշումը կրկին պահանջելով որ Ղարաբաղը Ատրպէյճանի կազմէն ներս մտնէ, Նարիմանովի այն պատրուակով որ գործերու նման ընթացքով «Ատրպէյճանում մենք վերականգնում ենք հակասովետական խմբերին»:

1921 Յունիս 26-ին Թիֆլիսէն Կովկասեան Կեդրոնական Խորհուրդի նախագահ Սերգօ Օրջոնիկից էւ Վրաստանի լիազօր ներկայացուցիչ Կիրով հակազդեցին անմիջապէս ու հեռագրեցին Նարիմանովին չառնելու որեւէ քայլ, այլ ղեկավարուիլ բարեկամական յարաբերութիւններ հաստատելու սկզբունքով, չիջեցնելով նաեւ որ «ոչ մի հայկական գիւղ պէտք չէ միանալ Ատրպէյճանին, ինչպէս եւ ոչ մի մահմետական գիւղ չի կարելի միացնել Հայաստանին»:

Հարցը աւելի չկիւճուեցաւ յանձնուեցաւ Կովկասի Կեդրոնական Վարչութեան, ուր ներկայ էր նաեւ մարաջախտ Ստալին: Հոս եւս հայնապաստ որոշում կայացաւ ու ձայներու մեծամասնութեամբ որոշուեցաւ Լեռնային Ղարաբաղը միացնել Հայաստանի, որուն ի նպաստ քուէարկեցին Օրջոնիկիցէն, Կիրովն ու Ալ. Միսսիկեանը: Նարիմանով սակայն բողոք բարձրացուց կրկին, եւ կովկասեան նմանօրինակ ժողովի մը յաջորդ նիստին վերատեսուութեան ենթարկուեցաւ Ղարաբաղի կցման հարցը: Հոս նախապէս առնուած հայնապաստ որոշումը կոպտօրէն գլխիվայր շրջեցաւ առանց քննարկման եւ քուէարկման:

Տիրահաճութեամբ այս որոշման մէջ կ'ըսուէր թէ «եւնելով մահմետա-

կանները եւ հայերի միջեւ ազգային խաղաղութեան անհրաժեշտութիւնից եւ վերին ու ներքին Ղարաբաղի տնտեսական կապից», Լեռնային Ղարաբաղը թողուլ Ատրպէյճանին, անոր տալով մարզային լայն իրաւասութիւն Շուշի մայրաքաղաքով: Այս որոշումը առնուած էր Ստալինի ճնշումին եւ Նարիմանովի սպառնալիքին տակ, վերջինս յայտարարելով որ «թէ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին տրուի, ապա Ատրպէյճան ցած է դնում ամէն պատասխանատուութիւն»:

Այս դժբախտ որոշումով, որուն դէմ բողոքեց Հայաստանի կառավարութիւնը, հայերով բնակեցուած եւ վարչական հայկական հող եղած Ղարաբաղը արհեստականօրէն ու վատօրէն կտրուեցաւ Հայաստանէն, եւ 1923 թուին Ստալինի վճիռով, մարզի կազմաւորման ատեն այնպէս մը ըրին որ Ղարաբաղ սահման չունենար Հայաստանի հողին հետ:

Այսօր Լեռնային Ղարաբաղը գտած է իր հարազատ գոյութիւնն ու կենսունակութիւնը: Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի յետագայ տարիներուն, 1988ին, Արցախի թեմը վերահաստատուեցաւ նորաօժ Տ. Պարգեւ Եպս. Մարտիրոսեանի թեմակալի պաշտօնով: Հայրապետը ստուա իր անդրանիկ այցելութիւնը նոյն տարին: Պարգեւ Սրբազան, քաջարթուն հովիւն ու Առաջնորդը, ծնած Ատրպէյճանի տիրահաճակ Սոււմգայիթ քաղաքին մէջ, բարեգործեց հին վանքերն ու եկեղեցիները, նորեր եւս կառուցանելով, ձեռնադրելով նաեւ համապատասխան թիւով հոգեւորականներ: Կրօնական դաստիարակութեան եւ կրօնագիտական ուսմանց համար կեդրոն հաստատեց ու մնայուն արժէք ներկայացնող կրօնական եւ հոգեւոր դիրքեր ի լոյս ընծայեց, բանիմաց

կարգ մը հոգեւորականներու աշխատասիրութեամբ:

Վազգէն Հայրապետի վերջին տարիներուն եւ Պարգեւ եպիսկոպոսի նախաձեռնութեամբ 1994 թուի Տիրոջ Պայծառակերպութեան տունին օժուեցաւ դար մը առաջ կառուցուած (1868-1887 տարիներուն) եւ սակայն կիսաւեր մնացած Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ Մայր Եկեղեցին, քառամյոթ պարիքի նախագիծով, կիսաշրջանակաձեւ խորանին երկու կողմերուն՝ երկյարկանի աւանդատուներով, հոյակապ եռաշարկ զանգակատունով, այս անգամ վերանորոգեալ եւ պայծառակերպեալ սպիտակափառ իր բարձրագուէթ ու ծաւալուն տարածքով, դառնալով Առաջնորդանիստ կեդրոնը Արցախի թեմին: Բարեգործուեցան ու բացուեցան նաեւ Գանձասարի Ս. Յովհաննէս Մկրտիչ հռչակաւոր վանքը (1238 թուին կառուցուած), Ամարասի Ս. Գրիգորիսի հնագոյն վանքը (Դ դար), Մարտակերտի Ս. Կարապետ եկեղեցին (1883 թ.) եւ Հաղուծի Ս. Յարութիւն եկեղեցին (1671 թ.) որպէս ուխտատեղիներ եւ ծխական եկեղեցիներ, ու այս բոլորով վերականգնեցաւ Ղարաբաղը որպէս ինքնուրոյն եկեղեցական թեմ եւ անկախ հանրապետութիւն, թէ իսկ տակաւին չձանցուած արտաքին աշխարհէն:

Քաղաքական եւ կրօնական միաւոր մըն է այսօր Լեռնային Ղարաբաղը, հեռու օտարամուտ աղանդներէ, մաքուր եւ գտարիւն դարբաղցի յատուկ աւանդութեամբ եւ վճռակամութեամբ: Այսօր նորակերտ եկեղեցիներու ցանցն ու մշակութային նորաբաց կեդրոնները կը կանգնին որպէս գործիք, զինակից եւ լծակից Ղարաբաղի հայութեան, թէ իսկ տնտեսական համեստագոյն պայմաններու ներքեւ:

Հ.Բ.Լ.ՄԻՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Շարունակուած էջ 7-էն

Մանուկեան, որոնք՝ փափախուն մեր ժողովուրդին հոգսերով եւ ապրումներով, փաղանգ մը կազմեցին գործիչներու, որոնք եղան ղեկավարներ՝ զեղացիկացած իրենց արդիւնքներով: Յիշենք մի քանին անոնցմէ միայն. Աղաթոն, Վահան Մալեգեան, Վ. Քիւրքիւրճեան, եւ Տոքթ. Տաղաւարեան, Արշակ Գարակչօգեան, Մելքոնեան Եղբայրներ, Գալուստ Կուրպէնկեան, Կիրակոսեան, Տիկիւն Լուկա Մանուկեան-Սիմոն եւ ներկայիս Պրն. Պերճ Սեդրակեան: Այս երախտաւորները ջանք չինայեցին մեր ժողովուրդը փրկելու աղէտներէն եւ մեր մշակոյթը ազատելու՝ կորուստէն. վկան՝ այսօր բոլոր այն դպրոցները, եկեղեցիները, որբանոցները, ընկերային ծառայութեան կեդրոններ, յատկապէս Հայաստանէն ներս, թոշակներ, Հայ գրողներու եւ թերթերու օժանդակում եւ գրքերու սպազորութիւն, հայագիտական ապրոններու հաստատում, համալսարան, կրթաթոշակներ, մարզական ողիմպիական հանդէսներ, որոնք կը վայելեն Հ.Բ.Լ.Միութեանը հովանաւորութիւնը եւ անոր հոգածութիւնը:

Հ.Բ.Լ.Միութիւնը իր 100-ամեայ առաքելութեան մէջ սրտապնդեց բազմահազար հայու բեկորներ, ազատեց բազմահազար ժողովուրդ եւ երիտասարդութիւն՝ այլասերումէ: Մեր ամայացած փառքը վերստին կենսի կողէց, վկան՝ իր գուրգուրանքը մեր յուզումներուն:

Անոնք որոնք պիտի պատմագրեն Հ.Բ.Լ.Միութեան պատմութիւնը երբեք դժուարութիւն պիտի չունեն-

ան գտնելու անոր փառապանծ արձանագրութիւնները: Այս սրբազան կազմակերպութիւնը սոգորուած է իր ցեղին առաքինութիւններով: Հաւատքով լեցուած, հաւատարիմ իր ուխտին, տաղանապեցաւ իր ապրումներուն մէջ, բայց տեսաւ ծրարակամը աւերակներուն մէջէն իր ժողովուրդին: Հետամուտ եղաւ հայկական դատին՝ բնականօրէն, եւ մղիչ ուժը անոր յառաջդիմութեան: Ջերմ պաշտպան եւ ջատագովը եղաւ ազգային միութեան, իր բարոյական եւ քաղաքական իմաստովն ալ:

Եթէ ուզենք իր 100-ամեայ գործունէութեան համադրուած ընել եւ կամ ուրուագծել իր գործունէութիւնը եւ կամ վաստակը, Հ.Բ.Լ.Միութիւնը դարձաւ վճիռ ցոլքը մեր ապրումներուն:

Հ.Բ.Լ.Միութիւնը անջատուած երբեք չմնաց մեր ժողովուրդին մտահոգութիւններէն: Հաւատարիմ իր կոչումին, ան կը շարունակէ մնալ մեր ընդհանուր հայ ժողովուրդին սիրոյ եւ հիացման արտայայտութիւնը:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին՝ կեդրոն ունենալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Առաքելոց շաւիղով՝ ներքին խռովքէն թեւազրուած կը հովանաւորէ այս կազմակերպութիւնը իր վաստակին հմայքովը:

Այսօր նոյն վաստակէն պարտադրուած Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմիա Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան կը միանայ այն երախտապէս խումբին՝ սոնախմբելու 100-ամեայ վաստակը այս մեծ կազմակերպութեան սրբազան առաքելութեան:

ԿՐՆԱՅ ԿՐԿՆՈՒԻԼ ԿՂՍԷՔ, ՆՈՅՆ ԽԱՂԸ՝ ԱՊԱ ԻՆՉ

Շարունակում է շաբաթ 1-ին

Անոն, պարզապես աւելի կը մտնան ինձ թուրքի, արդէն իսկ գետնին հաւասարած պատմական, քաղաքական եւ քաղաքական վարկը: Եւ իրօք, այդ անփառունակ վարկին ապացոյցները կարելի է համարել եւրասիոստրատեգիա իր մուտքը խոչընդոտող համաեւրոպական առարկութիւնները, որոնց մէջ յատկանշական բաժին մը վերապահուած է Հայոց Ցեղասպանութեան՝ նոյն ինքն թուրքի կողմէ մանչցուելու նախապայմանով:

Այդ բնուածներէն եւ գրուածներէն քանի մը օրինակներ տալու համար յիշեմ որ, Ֆրանսայի ազգային պատմական եւ սկզբունքային «Ազատութիւն, Հաւասարութիւն եւ Եղբայրութիւն» հաստատման մասին խոսող «Ս.ՊՈՒՇՈՒԹԻԻՆ»-ը ընտրեց: Իսկ «Բատիֆալ»-ը բերքը Ֆրանսայի Ազգային ժողովին ներկայ 106 երեսփոխանները որակեց ՏԻՄՍՈՒՆԻ: Ուրիշներ ՏԱՆԿԱԼԱՔՆԵՐ (անխելներ) անուանեցին քուէարկող 106 երեսփոխանները...

Փակագիծ մը բանալով արձանագրեմք, որ Էրտողանի կառավարութիւնը, իր 301 օրինագծով, կը դատապարտէր ու բանտարկութեամբ կը պատժէր բոլոր անոնք, որոնք համարակալութիւնը կ'ունենային հաստատելու հայոց դէմ գործադրուած 1915-թուի Ցեղասպանութիւնը, իր հողատարածքին

վրայ...: Այնպէս կը թուի, թէ իր տիրոջ՝ ԱՄՆ-ի օրինակով, ինքզինքներու ժ համարելով, իրեն համարատու կը նկատէ բոլոր այն տէրութիւնները, որոնք կը վնասեն իր պետական շահերուն:

Բանաձեւը անցաւ, 571-ի վրայ 126 ներկաներու մէջ, 19-ի դէմ 106 քուէով, հակառակ կառավարութեան կրաւորական ընդդիմութեան եւ Ազգային ժողովի անդամ, մեծ թուով երեսփոխաններու այլ եւ այլ պատճառաբանութիւններով բացակայութեան: Յիշեցնեմք, որ նախապէս, ընթացիկ տարուան Մայիս ամսուան մէջ, այս բանաձեւի քննարկումը դրուած էր Ազգային ժողովի օրակարգին վրայ, բայց մեծաքանակ բողոքի պահուն դուրս գումար էր, անոր նախագահ՝ Ժան Լուի Դեբրէի միջամտութեամբ:

Կրնա՞յ կրկնուիլ, կ'ըսէք, նոյնը: Քաղաքական կեանքի բատերաբեմին վրայ սպասելի է ամէն կարգի անակնկալ, չըսելու համար խայտակարարութիւն: Հոտառութիւններ կրնան գոյութիւն ունենալ, որ Ազգային ժողովի քուէարկած պատուարներ բանաձեւը կրնայ, նախորդին պէս, արժանանալ անպատուարներ մերժումի, վերջին պահուն:

Մենք պիտի չփորձուիմք կշտամբել Ծերակոյտն ու Շիրագը, որոնք ինչ-ինչ պայմաններու դրսեւորումով, Ազգային ժողովին քուէարկած բանաձեւը վերագնահատելու փորձութեան կրնան մատուցել: Այդ նախազգացումը կ'ունենանք հետեւելով Շիրագ-Էրտողան խնդրայարոյց հեռաձայնային խօսակցութեան, գոր լաւագոյնս շահագործեց թուրքի վարչապետը,

ԿԱՐԾԻՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԻՆ ՇՈՒՐՋ

Շարունակում է շաբաթ 5-ին

Տիւրքի կարծիքով՝ Ֆրանսիայի խորհրդարանի կողմից այսօր ընդունուած օրէնքը, որով պատիժ է սահմանուած Հայոց ցեղասպանութիւնը հերքելու համար, «նպաստ չի բերի հայութեան ապագայի եւ աշխարհում ցեղասպանութեան ճանաչման գործընթացի տեսակէտից»:

«Թուրքերը զրկուած են խօսքի ազատութիւնից, եւ նրանք հենց այդպէս էլ պնդում են: Սա թուրքերի համար դրական որոշում էր, որովհետեւ աշխարհը նոյնքան կարեւորութիւն է տալիս ցեղասպանութեան ճանաչմանը, որքան խօսքի ազատութեանը», - «Ազատութիւն» ռադիոկայանին այսօր ասել է Հրանդ Տիւրքը:

«Կարծում եմ, սատարելով այս որոշմանը, մենք մեր ոտքին ենք զարկում», - յայտարարել է թուրքահայ լրագրողը:

«Ես այսօր թուրքական դատարան եմ կանչուել, որովհետեւ ասել եմ, որ կատարուածը ցեղասպանութիւն է: 2007 թուականի մարտին կը սկսուի իմ դատավարութիւնը, բայց եթէ այս օրէնքը հաստատուի Սենատի կողմից, ես կ'ասեմ, որ կատարուածը ցեղասպանութիւն չէր: Սրտի ցաւով, իմանալով ճշմարտութիւնը, դա կ'ասեմ: Սա ոչ թէ ուրանալ է, այլ խօսքի ազատութեան պաշտպանութիւն», - եզրափակել է Հրանդ Տիւրքը:

Ի դիմաց Շիրագի քար լուծեան: Թէ ի՞նչ խօսեցան անոնք՝ այնքան ալ վաւերական կամ կենսական չենք նկատել: Թուրքի վարչապետին փշածները մատնոց մը չուր չեն լեցներ այնքան ատեն, որ լուծ է Շիրագ: Անկախ անկէ, հիմնականը՝ միջազգային լրատուական գործակալութիւններու ուշադրութեան կիզակետը դարձուած Հայոց դէմ թուրքի կողմէ կատարելագործուած Ցեղասպանութիւնն է, անոր շուրջ ստեղծուած հետաքրքրութիւնն է, որուն հայրապիջն է, ասպետական Ֆրանսան:

Ամէն դէպքին՝ անկախ Ծերա-

կոյտին առնելիք դրական կամ բացասական որոշումէն, կամ՝ Ցեղասպանութիւնը ժխտողները 5 տարի ազատազրկումով եւ 45 հազար Euro տուգանքով պատժելու կոչուած Հոկտեմբերի օրէնքը ի գործ դարձնելու համար նախագահ Ժակ Շիրագի դրական կամ ժխտական ստորագրութեան մենք մեր շնորհակալութիւնը եւ երախտագիտութիւնը կը յայտնենք Ֆրանսական Ազգային ժողովին:

Կրկին ու կրկին շնորհակալութիւն՝ Ազատութեան, Հաւասարութեան եւ Եղբայրութեան երկիր, ասպետական Ֆրանսային:

ՄԱՍԻՍ

ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ



Wahib

Wahib's

MIDDLE EAST RESTAURANT

الشرق مطعم

MEDITERRANEAN LEBANESE FOOD

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

CATERING FOR ALL OCCASION



MOUHAMAD SALEM & HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

FAMILY ENTERTAINMENT
BANQUET HALL
EVERY
FRIDAY ~ & ~ SATURDAY
NIGHT
INTERNATIONAL ~ ARABIC
CALL FOR RESERVATION



BELLY~DANCING

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641

PHOTO / CONCEPT- J / D - 2006 ©TEL(626) 795-4493

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:
Proud Past, Exciting Future.



AGBU IN ITS SECOND CENTURY. A Centennial Symposium.

"Tribute to the Past - Pathways to the Future"

Presented by:

AGBU SOUTHERN CALIFORNIA DISTRICT COMMITTEE

In Cooperation with

USC INSTITUTE OF ARMENIAN STUDIES

Part of USC College of Letters, Arts & Sciences

SATURDAY, OCTOBER 28, 2006

9:30 AM – 3:30 PM

University of Southern California, Town and Gown
Figueroa and Exposition - Gate 3 Entrance, Los Angeles, CA

Overview of Global Activities of AGBU with a focus on United States and Armenia

The Seminar will Address:

- **Organizational Structure**
- **Cultural and Educational Activities**
- **Sports, Youth, and Young Professionals Programs**
- **New Challenges and Opportunities**
- **Constituency Development**

Paper Presentations by:

DR. R. HRAIR DEKMEJIAN (USC)

MS. RAMELA ABBAMONTIAN (PhD Candidate, UCLA)

DR. MIHRAN AGBABIAN (President Emeritus, American University of Armenia)

DR. HARUTYUN ALEXANYAN (Armenian State Pedagogical University, Yerevan)

REV. FR. KTRIJ DEVEJIAN (Mother See of Holy Etchmiadzin)

DR. MATTHEW JENDIAN (CSU Fresno)

DR. SILVA KARAYAN (California Lutheran University)

DR. ANI MOUGHAMIAN (LA Unified School District)

DR. ANI YAZEDJIAN (Texas State University)

Special Guest Speaker:

HON. PAUL R. IGNATIUS

Former Secretary of the Navy - Under Secretary of the Army - Assistant Secretary of Defense

Complimentary breakfast, lunch and snacks will be served

Attendance is by reservation only – Seating is limited

Reservation Deadline: October 18, 2006

Please RSVP at: AGBU Alex Manoogian Center (626) 794-7942 or seminar@agbuca.org

AGBU CENTENNIAL SPONSORS

 **Commerces Casino**
LOS ANGELES
6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercescasino.com

 **CROWNE PLAZA**
HOTELS & RESORTS

Bank of Orange County is a full service bank prepared to meet the needs of both small and large businesses.

BANK of ORANGE COUNTY



MEMBER
FDIC

A Division of Placer Sierra Bank

Commercial Real Estate
Term Loans and Lines
Free Business Checking
High Rate Money Market

Contact:
Gus Ghusayni
Senior Vice President
411 N. Central Avenue
Glendale, CA 91203
bankoforangecounty.com
(818) 548-2720

ՄԱՐԶԱԿԱՆ

ՃԱՏՐԱԿ

ՁԱԽԵՆ ԱՆԴՐԵԱՍԵԱՆԸ՝ ԱՃԽԱՐԿԻ ԱԽՈՅԵԱՆ

Երեւանի Տիրգրան Պետրոսեանի անուան ճատրակի տանը աւարտած մինչեւ 20 տարեկաններու աշխարհի առաջնութեանը, 9,5 միաւորով ախոյեանի կոչումը նուաճեց 17-ամեայ հայ պատանի շախմատիստ Ձաւէն Անդրէասեանը, որ վերջին 13-րդ տուրում ոչ-ոքի աւարտեց պարտիան վրացի Լեւան Պանցուլիայի հետ:



Աշխարհի ախոյեան Ձաւէն Անդրէասեան

Ձաւէնը յատկապէս յաջող հանդէս եկաւ առաջնութեան 2-րդ կէսին, մէկը միւսի ետեւէն յաղթելով մինչ այդ մրցաշարային աղիւսակը գլխաւորող շախմատիստներին: 2-րդ տեղը գրաւեց ռուս շախմատիստ Նիկիտա Վիտյուկովը, որուն յաջորդեց ուկրաինացի Եուրի Կրիվորուչկոն:

Առաջնութեանը մասնակցած միւս հայ շախմատիստները ոչնչով

աչքի չընկան: Կանանց ախոյեանութեան կոչումը նուաճեց Եան Շենգը: Հայ աղջիկներէն լաւագոյն արդիւնքը ցուց տուաւ Սիրանուշ Անդրէասեանը, որ 7,5 միաւորով գլխաւորեց 19-րդ դիրքը:

ՐԱՅԱՍՏԱՆԻ «ՄԻԿԱԵՐԵԲԱՆ» ԿԱՆԱՆՑ ՃԱՏՐԱԿԻ ԽՈՒՄԲԸ ԼԱՎԱԳՈՅՆ Է ԵՎՐՈՊԱՅԻ ՄԷՋ

Երեւանի «Միկա» շախմատային ակումբը Աւստրիայի մէջ դարձած է Եւրոպայի կանանց ակումբային առաջնութեան յաղթող՝ անցկացրած 7 տուրում վաստակելով 12 միաւոր: 7-րդ տուրում «Միկան» 2:2 հաշուով է աւարտել հանդիպումը «Ուրալի» հետ եւ դարձել անհասանելի միւս մրցակիցներին համար: Հայկական թիմի կազմին ախոյեան են դարձել էլիսա Դանի-

էլեանը, Մայա Չիբուրդանիձեն, Մայա Կուրտսիձեն եւ Նելլի Աղիլեանը: Տղամարդկանց խաղերուն հանդէս եկող Երեւանի «Բանկային Արքան» 10 միաւորով գրաւած է ընդամենը 11-րդ հորիզոնականը, իսկ 12 միաւորով չեմպիոնի կոչումը նուաճած է ռուսական «Կուրսկ-400»-ը: 3-րդ տեղին արժանացած է «Ուրալը», որու կազմին հանդէս կու գար Վլադիմիր Յակոբեանը:

ԲՈՆՑԵԱՍԱՐՏ

ՊԱՔՈՒՆ ՉԷ ԵՐԱՃԽԱԿՈՐԱԾ ՈՒՄԱՍՏԱՆՑԻ ԲՈՆՑԵԱՍԱՐՏԻՎ ՐԱՅՐԱՊԵՏԵԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Ատրպէյճանի մայրաքաղաք Պաքուի մէջ մեկնարկած են Աշխարհի թիմային գաւաթի երրորդ հանգրուանի մրցումները, որուն կը մասնակցին ութ հաւաքականներ՝ Ափրիկէի (միացեալ թիմ), Չինաստանի, Ուկրաինայի, Ղազախստանի, ԱՄՆ-ի, Քուպայի, Ռուսաստանի եւ Ատրպէյճանի:

Ուսաստանի հաւաքականի գլխաւոր մարզիչ Ալեքսանդր Լեբզեակը «Սովետալի Սպորտին» մեկնաբանած է ստեղծուած տհաճ իրավիճակը. «Մենք չկարողացանք թիմի կազմին մէջ ընդգրկել այս տարուայ Եւրոպայի ախոյեան Դաւիթ Հայրապետեանը: Պատճառը սպորտի սահմաններից դուրս է: Դաւիթը, որ ազգութեամբ հայ է, ծնած եւ մեծցած է Ատրպէյճանին մէջ, սակայն երկրի յայտնի իրադրութիւններու ժամանակ ընտանիքով սկիզբը գաղթած է Հայաստան, յետոյ՝ Ռուսաստան: Նա որոշ կասկածներ ունէր՝ թուշեւ արդեօք այժմ Պաքու, թէ՛ ոչ: Մենք դիմեցինք Ատրպէյճանի բռնաբարտի ֆեդերացիային անվտանգութեան երաշխիքներ տալու խնդրանքով, սակայն դրանք չարուեցան...»,- ըսեր է Լեբզեակը:

ԱՃԽԱՏԱԿՈՐՆԵՐՈՒ ԿԱՐԻՔ
Փաստաթղթային մէջ հաստատութիւն մը կարիք ունի աշխատաւորուհիներու cash register-ի վրայ: Հեռաձայն՝ (626) 833-2331:

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ
«Մասիս» Շաբաթաթերթի բարեկամներէն Պրն. Գաբրիէլ Ալպարեան բարձր գնահատելով թերթի բովանդակութիւնը \$200 տուար կը նուիրէ «Մասիս»-ի ֆոնտին:

ՔԱԶ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 11:00-ից 1:00 Կլէմտէյլի 26-րդ կայանից

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ

ԱՆԳՆԻՈՑ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆութպոլի առաջնութեան ութերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Ուիկան Աթլ. - Մանչեսթըր Եուն. 1-3	Միտլըզպորո - Էվըրթըն 2-1
Փորթսմութ - Ուէսթ Յամ 2-0	Ասթոն Վիլլա - Թոթեմհամ 1-1
Լիվըրպոլ - Պլէքպըրն 1-1	Ռիսինկ - Չելսի 0-1
Արսենալ - Ուաթֆորտ 3-0	Նիւքեմըր - Պոլթըն 1-2
Մանչեսթըր Սիթի - Շեֆիլտ Եուն. 0-0	Ֆուլհամ - Չարլթըն 2-1

Առաջատար խումբերու դասաւորումը

Մանչեսթըր Եունայթըտ	8	6	1	1	17-5	19
Չելսի	8	6	1	1	13-4	19
Արսենալ	8	5	2	1	11-4	17
Պոլթըն	8	5	2	1	9-4	17
Փորթսմութ	8	5	1	2	12-3	16
Ասթոն Վիլլա	8	3	5	0	10-5	14
Էվըրթըն	8	3	4	1	12-6	13

ԳԵՐՄԱՆԻՈՑ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ ֆութպոլի առաջնութեան եօթերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Քոթայիւս - Տորթմունտ 2-3	ՎՖԼ Պոխում - Վարտըր Պրէյմըն 0-6
Նիւրնպըրկ - Արմ. Պիլքֆելտ 1-1	Մեոնընկլատպախ - Վոլպուրկ 3-1
ՖՍՎ Մայնց - Աախըն 1-3	Յանովըր-96 - Այնթ. Ֆրանքֆորթ 1-1
Շթութկարթ - Պ. Լիվըրքուզըն 3-0	Յանպուրկ - Շալքէ 1-2
Պայերն Միւնիխ - Յերթա Պերլիմ 4-2	

Առաջատար խումբերու դասաւորումը

Վարտըր Պրէյմըն	7	4	1	2	18-9	13
Պայերն Միւնիխ	7	4	1	2	11-7	13
Շալքէ-04	7	4	1	2	9-7	13
Յերթա Պերլիմ	7	3	3	1	12-8	12
Աախըն	7	4	0	3	13-10	12
Պայերն Լիվըրքուզըն	7	4	0	3	10-9	12
Մեոնընկլատպախ	7	4	0	3	9-9	12

ԻՏԱԼԻՈՑ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Իտալիայի ֆութպոլի առաջնութեան վեցերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Սամտորիա - Ա. Սէ. Միլան 1-1	Էմպոլի - Ֆիորենթինա 1-2
Ռեճինա - Ա. Ես. Ռոմա 0-1	Լացիո - Քալիարի 0-0
Ինթեր Միլան - Քաթանիա 2-1	Սիենա - Մեսինա 3-1
Փալերմո - Աթալանթա 2-3	Ասքոլի - Լիվորնո 0-2
Թորինո - Քիեւո 1-0	Փարմա - Ուտինէտ 0-3

Առաջատար խումբերու դասաւորումը

Ինթեր Միլան	6	4	2	0	12-8	14
Ա. Ես. Ռոմա	6	4	0	2	10-3	12
Փալերմո	6	4	0	2	14-12	12
Ուտինէտ	6	3	2	1	9-4	11
Սիենա	6	3	2	1	8-6	11
Լիվորնո	6	3	2	1	6-4	11

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆութպոլի առաջնութեան իններորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Լանս - Մարսէյլ 1-1	Թրուա - Լիլ 1-1
Թուլուզ - Վալանսիէ 3-0	Րընէ - Օքսէն 3-1
Փարիզ Սէն ժերմէն - Սըտան 4-2	Լիոն - Սէնթ Էթիէն 2-1
Նանթ - Սոչո 0-2	Նիս - Լորիան 3-0
Լը Մանս - Նանսի 0-0	Պորտո - Մոնպօ 1-0

Առաջատար խումբերու դասաւորումը

Լիոն	9	8	1	0	22-7	25
Մարսէյլ	9	6	2	1	17-5	20
Նանսի	9	4	4	1	9-5	16
Թուլուզ	9	4	3	2	12-10	15
Պորտո	9	5	0	4	11-12	15
Լիլ	9	4	2	3	14-11	14
Լանս	9	4	2	3	13-11	14

ՍՊԱՆԻՈՑ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆութպոլի առաջնութեան վեցերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Ռէալ Պեթիս - Տեփ. Քորունա 1-1	Կեթաֆէ - Ռէալ Մատրիտ 1-0
Օսասունա - Ռասինկ 0-1	Կիմնասթիք - Աթլէթ. Պիլպաս 2-3
Վիլլառէալ - Էսպանիոլ 0-0	Լեվանթ - Մայորքա 0-1
Ռէալ Սոսիէտ - Սարակոսա 1-3	Պարսելոնա - Սելիլլա 3-1
Սելթա Վիլո - Վալենսիա 3-2	Աթլէթ. Մատրիտ - Յուլէվա 2-1

Առաջատար խումբերու դասաւորումը

Պարսելոնա	6	5	1	0	16-5	16
Վալենսիա	6	4	1	1	12-5	13
Աթլէթ. Մատրիտ	6	4	1	1	10-5	13
Սելիլլա	6	4	0	2	12-8	12
Ռէալ Մատրիտ	6	3	2	1	8-3	11
Տեփոթիւօ Քորունա	6	3	2	1	8-5	11
Սարակոսա	6	3	1	2	14-9	10

ՀՈԳԵՐԱՆՊԻՍ



ԶՈՀՐԱՊ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Հանգուցեալ ԶՈՀՐԱՊ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 22 Հոկտեմբեր 2006ին, Փասաթինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, 2215 East Colorado Blvd. Pasadena, յաւարտ Ս. Պատարագի: Հոգեհաշ պիտի մատուցուի Պէշկէօթիւրեան (1901 North Allen Avenue, Pasadena) սրահին մէջ:

- Սգակիրներ՝ Այրին՝ Տիկ. Անուշ Մանուկեան եւ զաւակները՝ Դանիէլ եւ Ռիթա Եղբայրը՝ Պետրոս Մանուկեան Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Աւետիս եւ Անահիտ Մանուկեան Տիկ. Արմինէ Մանուկեան Եղբոր զաւակները՝ Տէր եւ Տիկ. Պերճ եւ Ասա Մանուկեան եւ զաւակը Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Ալին Արոյեան եւ զաւակը Տէր եւ Տիկ. Նազօ եւ Պէթի Մանուկեան Տէր եւ Տիկ. Արթ եւ Լիզա Մալիւօ եւ զաւակները Տէր եւ Տիկ. Կէրի եւ Դանիա Կարպուշեան Տիկ. Աղաւնի Սաղամեան Տիար Յարութ Սաղամեան Տէր եւ Տիկ. Հրաչ եւ Մարինա Սաղամեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Միհրան եւ Հէտըր Սաղամեան եւ զաւակը Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Անի Տէյիւրմէնճեան Տէր եւ Տիկ. Գարլօ եւ Գարոլ Արապաճեան եւ համայն Մանուկեան, Սաղամեան, Տէյիւրմէնճեան, Արապաճեան ընտանիքները եւ հարազատները:

ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶԱՐԺՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Շարունակուած էջ 1-էն

րագրուած կրօնականները: Կաթոլիկոսի թոյլատուութեամբ ճառ արտասանեց նաեւ Ղեւոնդ Երէջը: Նա նկատել տուեց, որ Աստուած մարդուն շնորհել է կամքի ազատութիւն որպէսզի այն ճիշդ օգտագործելով կապուի Աստուծոյ հետ ու երջանկացնի մարդուն: Նա նշում է Աստուածաշնչում ներկայացուած կերպարների մասին, որոնցում պէտք է ներշնչուեն հայ ռազմիկները: Նա նաեւ նկատել է տալիս, որ մարդկային պատմութիւնը աստուածային կամքով ու նման հերոսների միջոցով հասել է մի այնպիսի բարձունքի, որ անիմաստ է ետ գնալ: Պատմութիւնը անհրաժեշտ է շարունակել Աստուծոյ ճանապարհով: Փարպեցիին նկատել է տալիս, որ Տուրքիան բանակում տիրում էր Սուրբ Հոգին, որը ղեկավարում էր իւրաքանչիւրի վարքն ու միտքը ու պահպանում անվախութեան, միասնականութեան ու նուիրումի ոգին:

Այսպիսին էր Աւարայրի դաշտում պարսիկ բանակի դէմ կանգնած հայ զինուորականութիւնը, որը չէր վախենում մահից, քանի որ նա պայքարում էր չարի դէմ եւ իրաւ կեանքի համար, քանի որ պայքարում էր մարդու փրկութեան համար, քանի որ պայքարում էր խաչեալ եւ յարութիւն առած անմահ Քրիստոս Յիսուսի ղեկավարութեամբ, քանի որ հաւատում էր իր առաքելութեանը: Նա գիտակցում էր, որ Աւարայրի ճակատամարտով չի աւարտուում իր առաքելութիւնը: Նա ծրագրած էր իր պայքարը հասցնել իր յաղթական աւարտին:

Պարսկական բանակի հրամանատարութիւնը, հիմնուելով վասակ Սիւնիի գեկոյցների ու խոս-

տումների եւ հայ նախարարներին ուղարկած բանազնացների քանակի վրայ, մինչեւ վերջին ռոպէն յոյս է ունեցել, որ վասակ Սիւնիին պիտի կարողանայ քայքայել վարդանանց միասնութիւնը եւ աչգպիսով հայերը կրօնափոխ դառնալով պիտի վերանայ պատերազմի անհրաժեշտութիւնը: Ինչպէս երեւում է, նրանք գերազնահատել են դաւաճանի հնարաւորութիւններն ու կարողութիւնը եւ թերազնահատել վարդանանց ուխտը: Եղիշէ գրում է. « Սրանից յետոյ, երբ պարսից բանակի զորավարը տեսաւ, որ մէջտեղն էլ պատգամաւոր չմնաց նրանց խաբէլու համար եւ իր յոյսն ու ակնկալութիւնը կտրուեց նրանց բաժան-բաժան անելու անքակտելի միասնութիւնից, այն ժամանակ իր առջեւ կանչեց անօրէն վասակին եւ նրա հետ եղած իշտայ Աշխարհի բոլոր եւրացած իշխաններին. հարցուփորձ արեց նրանց եւ նրանցից սովորում էր յաղթութեան հնարագիտութիւնը: Եւ երբ տեղեկացաւ ամէն մէկի քաջութիւնները, կանչեց նաեւ իր ձեռքի տակ եղած զօրագլուխներից շատերին եւ հրամայեց իր առաջ բերել փղերի երամակները. գունդ-գունդ բաժանեց այդ գազաններին եւ ամէն մի փղի մօտ երեք հազար սպառազէն մարդ դրեց, բացի մնացած ամբողջ զօրքից»: Այսպիսով, վասակ թշնամուն փոխանցեց խիստ կարեւոր ռազմական գաղտնիք: Նա պարսիկ հրամանատարութեան տուեց հայոց բանակի հրամանատարական կազմի իւրաքանչիւր անդամի հոգեբանական բնութագիրն ու զինուորական փորձառութեան վերլուծութիւնը:

Մայիսի 26-ի վաղ առաւօտեան, հաղորդութիւն ստանալուց յետոյ, քաջ վարդան իր զինակից

ղեկավարների հետ խորհրդակցելուց յետոյ որոշեց բանակը ըստ զօրագնդերի բաժանելու ծրագիրը: Նա հայ բանակը բաժանում է չորս խումբի: Առաջին գունդը Սպարապետը յանձնում է Արծրունեաց իշխանին նրան նիզակակից նշանակելով Մոկաց մեծ իշխանին: Երկրորդ գունդին հրամանատար է նշանակում Խորէն Խորխոռունուն նրան նիզակակից դարձնելով Արսէն Ընծայեցուն եւ Ներսէճ Քաջբերունուն: Երրորդ գունդը յանձնում է Թաթուլ վանանդեցուն եւ նրան նիզակակից հրամայում լինել Տաճատ Գնթուկուն: Ինքը վերցնում է չորրորդ գնդի ղեկավարութիւնը՝ իրեն նիզակակից նշանակելով Արշաւիրին ու իր եղբոր Համագասպին: Ծակատամարտը սկսում է նետաձգութեամբ ու փոխադարձ գրոհներով: Հայերը ողջ ճակատով անցնում են գետը ու մեծ վճռականութեամբ յարձակում՝ անակնկալի բերելով թշնամուն, որը ենթադրում էր, որ հայերը յոգնած են ու վախեցած: Վարդան թոյլ չտուեց թշնամուն կենտրոնացուած մեծ ուժով ու փղերով անցնել ծանր ու հիմնական յարձակման ու նախաձեռնութիւնը վերցնել իր ձեռքը: Նկատելով, որ Սասանեան Պարսկաստանի բանակի ողնաշարը (սպահ) կազմուած էր երկու տեսակ (Կտիլբանարի եւ կատափրակտ) ծանր այրուձիի միաւորներից, որոնք բացառապէս ընդգրկում էին բարձր զինուորական կրթութիւն ստացած ձիավարժ երիտասարդ ազնուականներ: Ծանր այրուձին, կլիբանարին, ծածկուած էր բարակ երկաթէ շերտով, որտեղ յողուածատեղերը ազատ ծալուած էին եւ մարդկային դէմքերը նրբօրէն դիմակաւորուած էին: Ծանր այրուձիին նեցուկ էին կանգնում թեթեւ այրուձին, հետեւակը, աղեղնաւորները, փղերը եւ այլ զինուորներ: Սասանեան ռազմական տակտիկայի համար հիմնական էր աղեղնաւորների, փղերի եւ այլ զինուորական միաւորների միջոցով թշնամուն քայքայելով, «կրծելով» վերջինիս դիրքերում ձեղքուած քներ բացել: Այդ ռազմավարական հնարաւորութիւնը հայերը նրանց չտուեցին: «Եւ ամբողջ բազմութիւնը իրար գլխի խմբուելով՝ գետն ամէն կողմից փակեցին, եւ գետն անցնելու դժուարութիւնից վախեցած պարսից զօրքն սկսեց իր տեղում վխտալ: Իսկ հայոց զօրքն անցաւ գետը, եւ ձի նստած՝ մեծ գօրութեամբ յարձակուեց»: Վարդան, որը իր տեսադաշտում էր պահում ճակատամարտը, նկատեց, որ հայ հերոսների ճնշման տակ պարսկական զօրքի կենտրոնն ու ձախ թեւը նահանջում է, իսկ նրա աջ թեւում կռուող լեռնական ոչ-պարսիկ ցեղերը (հոնները, գեղերը, ապարիացիները, կատիշները) ճնշում են երիտասարդ Թաթուլ վանանդեցու գունդը: Գլխաւոր հրա-

մանատարը Արշաւիր Կամսարականին տրամադրում է պահեստագործի մի մասը, որպէսզի ուժեղացնի ճնշումը պարսիկների աջ թեւի վրայ, իսկ ինքը պահեստագործի միւս մասով օգնութեան հասնում վանանդեցուն եւ դեն շարտում նրան նեղող պարսկական ջոկատներին գազանների կողմը: Սպարապետը շրջանցում է կենտրոնական պարսիկ զօրքին, խուճապի մատնում պարսիկ պահեստագործին եւ դեռեւս պարտութիւն չկրած Մատեան գնդին փախուստի մատնում:

Պարսկական զօրքի հրամանատար Մուշկան Նիսալաւուրտը կարողացաւ իր նահանջող աջ թեւը կանգնեցնել ու այն համալրելով Մատեան գունդով եւ պահեստագործով վերադասաւորել ուժերը շրջապատում է պարսկական թիկունք թափանցած հայ հեծելազօրին, որին գլխաւորում էր Սպարապետը: Վերջինս «մեծ կոտորած արեց այնտեղ, ուր եւ հենց ինքն էլ արժանի եղաւ ստանալու կատարեալ նահատակութեան պատկը»: Ծակատամարտին ժամանակակից պատմագիր Եղիշէն վկայում է. «Որովհետեւ ոչ մի կողմը յաղթեց, եւ միւս կողմը պարտուեց, այլ քաջերը քաջերի դէմ դուրս գալով, երկու կողմերն էլ պարտութիւն կրեցին»: Իսկ Ղազարոս Փարպեցիին գրում է. «Եւ ինչպէս երկար փնտրելով եւ շատ քննելով ու հարցնելով իմացանք թիւն այն նահատակուածներին, որոնք պատերազմի դաշտում գոհուեցին աւագ նախարարների հետ՝ երկու հարիւր եօթնասուն եւ վեց մարդ էին (276): Նրանք, որոնց ամբողջներից հանելով սպանեցին սրով կամ փղատակ տալով կոտորեցին եօթ հարիւր եւ չիտուն տղամարդ (750): Բոլորը միասին լինում են հազար եւ երեսուն վեց մարդիկ (1036), որոնցից իւրաքանչիւրին վարձահատոց Քրիստոսը գրանցած պահում է Կենաց Մատեանում»: 750-ի մէջ էին մտնում այն հայ մարտիկները, որոնք պատերազմից յետոյ ցիրուցան եղան ու հետապնդուելով պարսիկների կողմից սպանուեցին: Պարսիկները տուեցին երեք անգամ աւելի զոհ՝ 3544 մարդ, որոնց 9 հոգին Շահին Շահի անմիջական շրջանակից: Վասակ Սիւնիին, որը թաքնուած էր փղերի մէջ, փրկել էր իր կաշին: Պարսկական պալատը խիստ ցնցուած էր, քանի որ երբեք չէր ակնկալում, որ ճակատամարտը նման վախճան կարող է ունենալ:

Աւարայրի ճակատամարտը կատարեց իր առաջ դրուած առաջադրանքները. պարսիկ բանակը չմտաւ երկրի խորքերը, այն ստացաւ ուժեղ ցնցում եւ հայ ժողովուրդը հնարաւորութիւն ձեռք բերեց ապստամբութիւնը շարունակելու հայրուկական կռիւներով եւ արձանագրելու յաղթանակ Նուարսակի դաշնագրով: (Շարունակելի)

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA ՄԱՆՐԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680 (626) 398-0506

ՀԱՅ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
ARMENIAN ATHLETIC ASSOCIATION



JOIN US IN CELEBRATING

85th

ANNIVERSARY

DINNER-DANCE

ՃԱՇԿԵՐՈՅԹ ՊԱՐԱՀԱՆԴԵՍ

Saturday

November 11, 2006

8:00 PM



PERFORMING LIVE

HAROUT

PAMBOUKJIAN

&

DJ TRONIX

Verdugo Hills Country Club

400 W. Glenoaks Blvd., Glendale

For Info Call

626-429-8366